

ՆՈՐ ԿԵԱՆՔ



ՀԱՆՆԻՍ ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Փրանսական կառավարութիւնը թիւրքիոյ մէջ ինքնազուլս եւ ազգեցիկ քաղաքականութեան մը հետեւելու որոշումը տուած կը թուի:

Երկու տարիէ հետէ Բարիզի մեծ հանգէսները եւ օրաթերթերը պատմական եւ քննադատական տեսութիւններով կը հաստատեն հայկական ինքրին բացումէն յետոյ Պ. Հանթոյի հետեւած արեւելեան քաղաքականութեան Փրանսայի թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական շահերուն համար արտադրած աղիտաբեր հետեւանքները: Պ. Հանթոյ Ռուսիոյ քաղաքականութեանը ուժ տուաւ, մինչդեռ Փրանսայի եւ Ռուսիոյ շահերը հիմնովին կը տարբերէին իրարմէ: Ռուսիա թիւրքիոյ կործանումին եւ Քրիստոնեաներուն տկարացումին մէջ կը տեսնէր իր ծրագիրներուն յաջողութեան կենսական պայմանը, մինչդեռ Փրանսայի շահերը կը պահանջէին օսմանեան կայսրութեան եւ քրիստոնեաներուն բարդաւաճումը եւ հզօրացումը: Ու Փրանսա ի փոխարէն իր հաճոյակատարութեանը ո՛չ միայն ո՛ր եւ է զրական օգուտ ձեռք չբերաւ, այլ եւ իր բարոյական ազգեցութիւնը սաստկապէս տկարացած տեսաւ, եւ իր նիւթական շահերը վտանգուած: Ընդհանուր զգոհութեան ձայն մը սկսաւ բարձրանալ. ազատականներն ալ ու կղերականներն ալ, հանրապետականներն ալ ու միապետականներն ալ հաւասարապէս կը տրտնջային, ու դառնութիւնը մեծ էր մանաւանդ այն պատճառաւ որ թիւրքիոյ մէջ Փրանսայի կորսնցուցած տեղը Գերմանիան կը բռնէր:

Երբ Պ. Հանթոյի Պ. Տէլքասէ յաջորդեց, տեսնուեցաւ թէ Կ. Պոլիս Փրանսական քաղաքականութիւնը պիտի փոխուէր:

Նոր նախարարը զժուար կացութեան մը մէջ կը գտնուէր: Գերմանացիները շատ առաջ գացեր էին Պոլիս, ու երկրին անտեսական բոլոր ուժը իրենց ձեռքը անցընելու վրայ էին, քրիստոնեաները ալ իրենց բազմադարեան բարեկամ Փրանսայէն պաղած էին, ու թիւրքերը առանց շնորհապարտ մնալու Փրանսայի՝ հայկական ջար-

դերուն առթիւ ցոյց տուած անտարբերութեանը համար, կ'արհամարհէին զայն իբր Ռուսիոյ ստրուկը: Պ. Տէլքասէ սկսաւ զոչուաւոր քաղաքականութեան հետեւիլ որպէս զի Փրանսա վերստին տիրանայ թիւրքիոյ մէջ կորսնցուցած կուսանին: Եւ ահա Պ. Քոնսթանտինոպոլի բայց միանգամայն թրքասէր անձնաւորութեան մը Կ. Պոլսոյ զեսպանութեան կոչուիլը Պ. Տէլքասէի ծրագիրներուն կարեւոր մէկ յայտարարութիւնը համարուեցաւ: Փրանսա ո՛չ ուսականին նման նենգամիտ, ո՛չ գերմանականին նման ամէն ինչ շահու զոհող քաղաքականութեան մը կրնար հետեւիլ Կ. Պոլիս. ո՛չ կրնար սուլթանին հետ թշնամանալ, ո՛չ ալ ծայրայեղ հաճոյակատարութեան ստորնանալ: Որքան որ ալ տակաւին յստակ չեն երեւիր Պ. Տէլքասէի քաղաքականութեան մեծ գիծերը, բայց տկաներու է որ Պ. Քոնսթանտինոպոլի Փրանսայի եւ թիւրքիոյ միջեւ բարեկամական յարաբերութիւնները վերանորոգելու եւ ամրապնդելու, իր կառավարութեան ազգեցութիւնը զօրացնել Պոլիս: Կը հաւաստեն յակայն թէ Պ. Տէլքասէ ուղղամիտ եւ խելացի նախարար մը ըլլալով տրամադիր չէ յիմարաբար շահամոլ քաղաքականութեան մը զոհել թիւրքիոյ քրիստոնեաները. ընդհակառակը՝ անոնց վիճակին բարուքմանը մէջ կը տեսնէ Փրանսայի բարոյական եւ նիւթական շահերուն պաշտպանութեան զլիսաւոր մէկ պայմանն ալ: Առ այժմ որոշ կերպով բան մը չենք կրնար գիտնալ. բաւական կը համարինք Հայոց ուշադրութիւնը եւ Բարիզի Պոլսոյ յարաբերութեանց վրայ հրաւիրել, ու միայն քանի մը նկատողութիւններ կը ներկայացնենք:

Հայաստանի վիճակին բարուքմանը համար մեր աշխատութիւնները ու զոհողութիւնները անգույ անզաղար յարատեւութեամբ շարունակած ատեննիս, կրնանք Եւրոպայի պետութեանց մէջէն ամէնէն աւելի Փրանսայի վրայ յոյս դնել: Մեր շահերը չեն հակառակիր Փրանսայի արեւելեան շահերուն, ու հայ ցեղը շատ լաւ միջնորդ մըն է Փրանսայի ազգեցութիւնը Արեւելքի մէջ տարածելու համար: Յիսուն տարուան պատմութիւնը կը հաստատէ այս ճշմարտութիւնը: Այլ հիմակ Պոլիս զպրոցէ ելած գրեթէ բոլոր Հայերը Փրանսաբէն գիտեն, Հայաստանի ամէն քաղաքներուն մէջ փրանսագէտ բազմաթիւ Հայեր կը գտնուին, փրանսական դրականութեամբ կը սնանինք,

Փրանսայէն կը ստանանք մեր զիտութիւնը: Փրանսայի թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական շահերը կը պահանջեն հայկական շահերուն պաշտպանութիւնը: Իրաւ է որ Պ. Տէլքասէ սուլթանը սիրաշահելու տրամադիր կ'երեւի. սակայն մենք Փրանսայէն պիտի օգտուինք ո՛չ թէ թիւրքիոյ զեմանոր ունեցած թշնամութենէն, կամ թիւրքիոյ նկատմամբ տաճած բարեկամութենէն, այլ թիւրքիոյ վրայ ունեցած ազդեցութենէն: Այդ ազդեցութիւնը որքան աւելի մեծ ըլլայ այնքան աւելի օգտակար է մեզի: Բայց թէ ֆրանսական կառավարութիւնը ի՛նչ միջոցներով պիտի կարենայ այդ ազդեցութեանը տիրանալ, այդ մեր զիտնալու բանը չէ, Պ. Տէլքասէ Հայոց խորհուրդներուն թելադրութեամբը պիտի չգործէ: Մենք ալ պէտք է յիշենք որ Փրանսա Նաբուլէոն Գի օրովն էր որ թիւրքիոյ հետ բարեկամական ամենասերտ կապերով կապուեցաւ, ֆրանսական ազդեցութիւնը գերիշխան էր Կ. Պոլիս. եւ սակայն այդ ջերմ բարեկամութեան միջոցին էր որ Փրանսայի միջամտութեամբ Լիբանան առանձնաշնորհեալ կազմակերպութիւն ունեցաւ: Թիւրքերը Փրանսացիներէն շատ կ'ախնաձին, վասն զի համոզուած են որ անոնք իրենց երկիրը թալլելու, կոտորելու, կործանելու, գրաւելու փափաք ու ծրագիր չունին: Միանգամայն դիտեն ալ թէ Փրանսացիները խարդախ չեն, եւ երբ մէյ մը բռնկին, ա՛լ չեն հանդարտիր, ուստի կը վախնան Փրանսացիները զրոգելէ:

Մօտաւոր անցեալի մը մէջ Փրանսայի կամ աւելի ճիշդը Պ. Հանոթոյի մեզի նկատմամբ հետեւած քաղաքականութիւնը մեզի Հայերս շատ դառնացուցած է, ու Փրանսայի հեղինակաւոր քաղաքագէտները եւ հրապարակագիրները խիստ քննադատեցին այդ վարմունքը որ ինչքան միասարեք եղաւ Հայոց, այնքան ալ հարուածեց ֆրանսական ազդեցութիւնը. հիմա ա՛լ ատոնց չենք վերադառնար, յուսալով Փրանսայէն նոր ուղղութիւն մը. բայց եւ այնպէս նկատողութիւն մըն ալ աւելորդ չէ: Փրանսա 1894էն յետոյ ո՛չ իր նախարարներուն միջոցաւ, ո՛չ իր խորհրդարանով, ո՛չ իր մամուլովը չհետեւեցաւ անոնկ ընթացքի մը որ մեր յուսախաբութեան օրերուն մէջ զինքը մեղադրելու պատճառ մը ունենայինք: Ո՛չ ննդաւոր եղան Փրանսացիները, ո՛չ ալ անհեռատես թեթեւամիտ: Սասունի խնդիրը ծագած ատենը իսկ ֆրանսական զեպան Պ. Գանպոն անկեղծօրէն պատրիարքին իմացուց թէ «ընելիք մեծ բան մը չկայ. թիւրքական օրէնքները շատ լաւ են, մանր մանր բարեփոխութիւններով անոնց գործադրութիւնը կը բաւէ ձեզի:» Ու Պ. Հանոթօ, արտաքին գործերու նախարարը, մեր ձգտումները քաջալերող ո՛ր եւ է բան մը չըրաւ: Փրանսայի այս ուղղութիւնը զառնացուց մեզի, բայց ետքէն մտածեցինք որ ուրիշ արութիւններ եւ ազգեր ալ մեզի լաւագոյն ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլային եթէ իրենք ալ փոխանակ ետքէն մեզի լքանելու, մեզի հարուածելու, մեզի կից տալու, առաջուց Փրանսայի օրինակին հետեւած ըլլային:

Փակելով անցեալին այդ տխուր էջերը, եւ ապագան նախատեսելով պէտք է ջանանք Փրանսայի բարեացակա-

մութիւնը մեր վրայ հրաւիրել:

Նախ եւ առաջ պէտք է հաստատ համոզուինք որ հայկական դատին համար մեր կողմէն ո՛ր եւ է յուսահատութիւն, ո՛ր եւ է լքում կը նուստացնէ մեզի Փրանսայի աչքին, եւ մինչեւ իսկ զգուշի պիտի ընէ: Աստուծոյ պատահան խղճովորդը կը սիրէ ու կը յարգէ այն ընկճուած ազգերը որոնք իրենց բոլոր աղէտներուն մէջ հաստատ նկարագիր ցոյց կուտան: Չախորդութիւններու առջեւ յուսահատող, իր սխալները շտկելու անկարող եւ վհատող ժողովուրդ մը արհամարհանքի առարկայ կրնայ ըլլալ միայն: Միշտ, անվհատ պէտք է զիմենք միեւնոյն նպատակին, եւ ան ատենն է որ քաղաքական դժուարութիւնները կը հարթուին հայ ազգին պնդակազմ արիւթեանը առջեւ:

Բայց միեւնոյն ատեն ինքզինքնիս խարելու չենք թէ Փրանսա որովհետեւ ապետական է եւ հանրապետական, կարող է իր հովանին տարածել այն ամէն յիմարութեանց վրայ որոնք յանուն Հայոց ազգին կը գործուին: Կառավարութիւնները հանրապետական ըլլան թէ միապետական, որովհետեւ կառավարութիւն են, կարգ մը ընդհանուր սկզբունքներու մէջ համերաշխ են, եւ անոնց վտանգուիլը երբեք չեն ուզեր: Հայ մը գերագանցօրէն ապուշ պէտք է ըլլայ որպէս զի մտքէն անցնէ թէ Եւրոպայի զբաւառներու, վաճառականներու, ձեռնարկուններու շահերը վտանգելու անիշխանական փորձերը կրնան Հայաստանի համար ո՛ր եւ է օգուտ ունենալ: Բնականաբար խօսքերնիս գիտակցօրէն ոճրագործներու համար չէ. անոնք շատ խելացի են եւ բրածուն հետեւանքները առաջուց նախատեսելով ըստ այնմ՝ կը գործեն:

Փրանսայի կառավարութիւնը որքան որ ալ հանրապետական է բայց եւ այնպէս էն բարբարոս կառավարութեան նման անգութ կը դառնայ, երբ Պոլիս Գրետի Լիոնէ մը, Պոն Մարշէ մը, Պանք Օթոման մը ոճրել ուզեն Հայերը: Ինքն ալ ամէն կառավարութեանց հետ պիտի միաբանի որպէս զի սուլթանը ազատ թողուն իր ուզած միջոցներովը զսպել անիշխանականութիւնը որ երբեք գործ չունի ազգի մը ազատագրութեան դատին հետ:

Փրանսական հանրապետութիւնը այսօր Եւրոպայի մէջ օրէ օր կը դորանայ, ու մեծ պետութիւնները իր բարեկամութեանը ակնկալոյց են: Ռուսիա իր դաշնակիցն է, Գերմանիա զինքը կը շոյէ, Իտալիա անոր կը մօտենայ, Աւստրիա կատարելապէս բարեկամ է, եւ Անգլիա Փրանսայէն կը քաշուի: Ու հանրապետական կառավարութիւնը այս զօրեղ զիրքը ունենալով՝ Արեւելքի մէջ պիտի գործէ ֆրանսական շահերուն համաձայն քաղաքականութեամբ: Կրնանք յուսալ թէ Փրանսա մեր զօրաւոր եւ վտահազնի պաշտպանը պիտի հանդիսանայ, եթէ մենք ալ մէկ կողմէն զգուշանանք այնպիսի գործերէ որոնք ամբողջ Եւրոպայի հետ Փրանսան ալ կը խրաչեցնեն, ու միւս կողմէն՝ քաջութիւնը եւ խելքը միացնենք եւ անվհատ աշխատինք:

ՕՐՈՒՆՆ ԿԵԱՆՔԸ

Լոնսոն, 21 օգոստոս 99

Հեռորեան շորչը: — Թարթարեկեան տխար մը: Երեւակայորեան աշխարհէն: — Իրական կեանքի պատ- իկերները:

Սրտի գպչող հծծին մը կը լսուէր օգոստոսի Բուզմու- վիպէն: Ֆրանսերէն հանդէսի մը մէջ Չօպանեան ժամա- նակակից հայ գրականութեան պատմութիւնը ամփոփած ատեն, երբ աչքերը Ս. Ղազար կը դարձնէ, Մենաստա- նին վրայ կէս դարէ ի վեր ցաթած բարի արեւուն ճառա- գայթեմերն կը խոզտին անոնք, ու ա՛լ չորս զին զիտելու անկարող, Ալիշանէն զատ ոչ ոք կը նշմարէ հոն: Այդ շարացումէն զգածեալ, երիտասարդ Մխիթարեան մը կը վազուէ թէ Ս. Ղազարի մէջ Ալիշանէն ի վեր եղած են ուրիշ հեղինակներ ալ «որոց ամբողջ կեանքը նուիրուած է «ի զարդացումն հայկական գպրութեան և մատենագրու- «թեան»:» Չէ՛, նախանձը չէ որ կը շէ: Մխիթարեան- ները որդիական սիրով կը դուրջուրան իրենց Հօրը վրայ. ամէնուն սիրտը միատրոփ կը ցնծայ երբ Հայութիւնը կը խնկէ Մեծ Նահապետ: Եւ սակայն վանական միաբա- նութեան մը զգացումներուն նրբութիւնը ո՛վ կրնայ երբեք խորագննին քննել: Մխիթարեանները, Ալիշան առաջինը ըլլալով, կը խոսովին երբ կ'իմանան թէ հայ ազգը զիրենք կէս դարէ ի վեր մտաւոր ամլութեան զատապարտուած կը կարծէ: Երկարատեւ ամլութիւնը գրական մարմնի մը տա- պանագիրն է:

Բայց Մխիթարեան մատենագրութեան վերջին յի- սուն տարիներու պատմութիւնը լրջօրէն քննողը դեռ մահ- ուան հոտը չ'առնեք անկէ: Սակայն չմոռնամ թէ իմաս- տասիրական խորհրդածութիւններու լաբիրիթոսին մէջ երկար ատեն թափառուեալ ալ քրտնիկին մահն է: Մեր կեանքը լողակեան թրթուռներու հիւսուածք մըն է մի- այն: Առանց շատ յամելու Չօպանեան—Բազմավէպ խնդ- րին շուրջը, լուծուած հարցումի մը մէջ կ'ուզեմ փնտռել: «Ինչո՞ւ, Հայր պատուական, Ս. Ղազարի գրական պատ- մութիւնը ուրուագծողները Ալիշան—կոթողին առջեւ կանգ կ'առնեն ու ա՛լ անկէ անդին չեն անցնիր:» «Օ՛հ, մեր պատմարանը դուք, և «ինչուն» մեզի կը հարցնէք» պիտի պատասխանէք: Իրատունը սնիք, ուրեմն ուրիշ հարցում մը. «Դո՞ւք ինչո՞ւ Բազմավէպին մէջ Խորենացիին ու Աղա- թանգեղոսէն շատ աստիճան չ'ընդհանրէք: Միթէ հայ ազգը կէս դարէ ի վեր չ'ընա՞ւ պատմարաններ, բանաստեղծներ, վիպասաններ, հրատար սրտկազիւրներ, որոնց ամբողջ կեանքը նուիրուած է ի զարդացումն հայկական գպրութեան և մատենագրութեան:»

Իմ կարծիքովս սակայն այս փոխադարձ մոռացու-

թեան մէջ չարամիտ կանխամտածութիւնը մաս եւ բաժին չունի: Ազգային ժառանգական բնագոյն է որ ամենքս ալ վանական ու աշխարհական անզգալարար կը վարէ, կը մղէ, կը բռնէ, կը տանի: Անցեալը կեղբոնաձիգ ուժն է որ ամէն Հայերը իրեն կը բաշէ, իր շուրջը կը բուրբէ, կը միարանէ: Ամէն ժողովրդի համար ժամանակը երեք բա- ժանու՛մ ունի՝ անցեալ, ներկայ, ապագայ. Հայուն հա- մար այս բաժանումը պարզուած է, երկուքի վերածուած է՝ անցեալ, ապագայ. ներկայ չկայ: Ներկան իրականու- թիւն է, ու ինչ որ իրական է Հայը անկէ կը խորշի: Թե- րեւն անոր համար — քիչ մը լաւատես ըլլանք որ սփոփ- ուիւնք — Հայը շատ զեղեցկատէր է. ուստի եւ իրականը չի սիրեր. ինչ որ իրականութիւն է, ան տեղեւթիւնն է՝ չէ՛ ըսուած: Հայը կը սիրէ ապագան — երբ պահանջկոտ չէ ան: Աչքերը կը յառէ հեռուն զեղեցկափայլ հորիզոնի մը վրայ, հո՛ն իր երեւակայութեան ստեղծած լուսապու- երկոյթին կը հրճուի, իր օրուան ցաւերը կը մոռնայ երա- զանքներու հրճուանքէն:

Հանգստաւէտ երազանք և անցեալին մէջ: Անիի ա- ւերակները թափառող Հայուն սիրտը տրտմութեան հըրճ- ուանքովը կ'ուղղի: Խաչ, թուր, պալատ, տաճար, ա- մենքն ալ ինկած, կատրած, ջախջախուած, մամուռին տակ ծածկուած, ամենքն ալ զեղեցիկ: Ու զեղեցիկ մտ- զիկն ալ որ մեռած գացած աներեւու՛յթացած են: Տղեղութիւն չկայ, ամենքն ալ կը փայլին մահուան զեղեցկութեամբը. Տէ՛ս, գիտար զեղեցկացո՛յց գիտ մահ, արար գիտ տարփելի:

Ու այդ բարի անցեալը, ինչքան քիչ պահանջկոտ է. բան մը չ'ուզեր մենէ, ո՛չ կեանքի զոհողութիւն, ո՛չ զրամի — շատը շատը գաղափարի զոհողութիւն միայն: Ահա ինչու համար Հայը աշխարհական թէ վանական միշտ կը սիրեն Խորենացին, Աղաթանգեղոսը, Եղիշէն, Ալիշանը, եւ անոնց փարած կը մնան:

* * *

Ասոնք կը մտածէի երբ Յարութիւն Չաքրեանի մահ- ուանը լուրը կարդացի. անոր դէմքին հետ Չէթունը աչ- քիս առջեւ եկաւ, ապացոյց մը եւս թէ Հայուն համար ներկայ չկայ: Ո՞ր հայուն սիրտը ի լուր Չէթունի ան- ուան չի կայթեր: Կայ՞ հայ մը որ չերդէ «Ապստոմուս լերան մը կող»ը, «Դու զո՞վ խնդրես»ը, «Ո՛չ փող զար- կինք»ը: Անցեալ այդ ամենքը: Ու օր մը երբ զէնքի շա- չիւնը կը լսենք, կը ցնցուինք, ամէն Հայու աչքը անդին շատ հեռուն «արծիւի բոյնը» կը տեսնէ, ու աչքերը անոր վրայ կը յառէ: Օր մըն ալ զէնքի շաչիւնը նորէն կը մարի, տերտերը խաչը կ'առնէ հէ ի հէ զազաղներուն ետեւէն կը վազէ: Հիմակ ա՛լ անօթութիւնն է, հիւանդութիւնն է որ կարծես երբ մէկիկ մէկիկ գերեզման կը տանին. ու Հայը աչքերը մէկիկ կը դարձնէ այդ լեռներէն. հիմա ներկան է, իրականութիւնն է, ցաւն է: Աս է Չէթունի ամբողջ պատ- մութիւնը. ու Չաքրեանի կեանքն ալ անոր մաս կը կազ- մէ: Պատերազմող Չէթունցի մը որ անօթի կը մեռնի:

Տասը տարի է որ այդ դէմքը աչքէս վրիպած էր, երբ այս փետրուարին Գազիբէ բարեկամ մը որ Պուլկարիայէն եկած էր, յիշեցուց զայն, « ծերացած, հիւանդ, տկար խեղճ մը որ խմբագրութիւն կ'ընէ » ըսելով: Ու այդ նկարագրութեան ի լուր սրտի սեղմումով մը յիշեցի խարտեաշ, պիտերը ուրբած, հերոսական չալքումով երիտասարդը, որուն ձեռքը քսան տարի առաջ երկիւղած յարգանքով սղմած էի:

Պերլինէն ետքն էր աշնան շաբաթ օր մը, հանգուցեալ Ստեփան փափագեան, որուն հետ նոր կը ծանօթանայի, գտաւ զիս Ղալաթիա եւ հաղորդեց թէ Զէյթունէն եպիսկոպոս մը եւ զինուոր մը եկած են, բան մը պիտի պատրաստուի, ու ինէ խնդրեց որ երթամ հետերնին տեսնուիմ: Ինք խօսած էր:

Ղալաթիա Սանտրքճիներուն մէջ, կամուրջէն եկած ատենդ ալ թեւիդ վրայ, յոյն-մայթըզի մը հնկէկ պանդոկը կայ, որուն զրան վրայ երկու արծիւ սեւցած նկարները խորհրդաւոր զինանշան մը կը յօրինէին: « Արծուի բոյնէն » թոած Հայերը հոն եկած թոած էին: Մի՞նչ նրբանցքէ մը անցնելով, փայտէ սանդուխներէ, միշտ մթութեան մէջ վեր ելլելով, տեսայ պգտիկ սենեակ մը որուն զրան քով, դուրսը, մէկ երկու կոտորած աթոռ եւ ալաթութեան աղտոտ սէտի մը կային: Սէտիին վրայ փառայեղ ծերունի մը նստած էր, այտերը կաս կարմիր, մօրուքը ճեպ ճերմակ: Ամբողջ զգեստը ճերմակ գիշերագոյնս մըն էր, որուն թեւերը սօթած էր: Ոտքերը բոպիկ էին, աջ ոտքը ճախ ափին մէջ առած, զլուխը կախ, աջ ձեռքովը ըզունգները կը կտրէր: Ոտքիս ձայնէն զլուխը վեր առաւ: անունս տուի: Աճապարեց ժողովուրտուիլ. գործը կէս ձգեց, մկրատը մէկդի դրաւ, աջ ձեռքով աղէկ մը շտկեց շտկըրտեց, մաքրեց կտրուած ըզունգները եւ ոտքը, ու աս ձեռքը « բարի եկաք » ու մը երկնցուց որ համարեմ: Ի՞նչ ընել. « զիւցազնի » մը ձեռքն էր — ան ատեն հերոս տիտղոսը տակաւին ներմուծուած չէր մեր մէջ: Ֆրնուզի համբաւաւոր Նիկողոս եպիսկոպոսն էր: Նոյն պահուն սենեակէն ալ երիտասարդ մը դուրս ելաւ, ծուռ քիթով, խարտեաշ պիտերով, գրեթէ նիհար, աս ալ Յարութիւն Չաքրեանն էր:

Սկսանք խօսիլ: Կ'ուզէին Պոլսէն եւ Ռուսաստանէն աշակցութիւն եւ զօրավիգ գտնել Զէյթունի համար, ու մանաւանդ Ներսէս պատրիարքին պաշտպանութիւնը ձեռք բերելու համար միջնորդութեան կարօտութիւն ունենալին զգացուցին: Բաւական զարմացայ տեսնելով որ Զէյթունի ներկայացուցիչները կը քաշուէին ուղղակի Հայոց պատրիարքին պիտել: Ինչ եւ է, մէկ ժամուան տեսակցութենէ յետոյ մեկնեցայ:

Նոյն իրիկունը երբ շողեանաւ մտայ Օրթագեղ երթալու, հանդիպեցայ Ալեքսարեթի խմբագիր Պ. Անդրանիկ Այվազեանի: Հարցուց թէ արդեօք տեղեկութիւն ունէի՞ Զէյթունէն եպիսկոպոսի մը եւ Չաքրեան Յարութիւն անուն անձի մը Պոլիս եկած ըլլալուն: Հաստատական պատասխան տուի. խնդրեց որ եթէ ուր ըլլալին գիտեմ, շուտով

հաղորդեմ որ ատեն մը երեւան չելլեն: Չաքրեան նիւրիկիս ամերիկեան հպատակ Հայ մը սպաննած էր, կարծեմ բժիշկ մը, եւ ամերիկեան հիւպատոսարանէն Պոլսոյ զեսպանատունը բողոք եկած էր, ծանուցանելով միանգամայն Չաքրեանին Պոլիս մեկնած ըլլալը: Մինչեւ խնդրին կարգադրութիւնը ասոնց՝ պահուրտիլը հարկաւոր էր: Շոգեանաւր Գապարժաշ մօտեցաւ. զուրս ցատքեցի եւ շունչս շիտակ Ղալաթիա երկարժեան պանդոկը առի: Սաստիկ սրտնեղութեամբ Չաքրեանէն տեղեկութիւն խնդրեցի այս եղելութեան մասին: Չեղքը օդին մէջ սաւառնելով թատերական վսեմութեամբ մը պատասխանեց.

— Զինուորը զրամի եւ ուտեստի պէտք ունէր, սպաննեց:

Աւա՛ղ, ազատ Հայաստանի զօրավար մը չէր որ կը խօսէր. ո՛չ Դուրը, ո՛չ ամերիկեան զեսպանատունը այդ լեզուէն կը հասկնային: Առաջարկեցի որ քանի մը օր դուրս չելլեն, արտաքին ո՛ր եւ է յարաբերութիւն իրենց հետ եւ կը կատարէի, մինչեւ որ Պայպլ-Հաուսի մեր բարեկամները յաջողին այս խնդիրը վերջացնել:

— Շա՛տ աղէկ, ըսաւ լակոնաբար:

Յաջող օրը կիրակի Հայրիկ կը պատարագէր Օրթագեղ: Արարողութեան աւարտումէն ետքը ժամարարը եկեղեցիին պարտէզին քարափոր սենեակը մտաւ հանգերձ փոխելու. զրան առջեւ ժողովուրդը խնուած էր, մէյ մըն ալ Չաքրեանը չտեսնեմ: Բարկացայ եւ ըսի.

— Աս ի՞նչ է, եկեր ե՛ս:

— Ո՛չ ոք Պոլիս զիս կը ճանչնայ, ըսաւ, միշտ վսեմ շեշտով մը: Ու հրելով հրմշտկելով առաջ կ'անցնէր, եւ ալ հետը: Եւ ահա Հայրիկ երբ ետին դարձաւ ու Չաքրեանը տեսաւ.

— Ծօ՛ չօլախ, դուն եկե՛ր ես, հարցուց խնդալով: « Չօլախ » ըսաւ անուն ուշադրութիւնը գրաւեց: Ու տարակոյսը զիս առաւ. ո՛չ ոք զինքը կը ճանչնար ու ահա Հայրիկ « չօլախ » ըլլալն անգամ գիտէր: Եւ երբ դուրս ելանք ինքնաբերաբար բացատրութիւն տուաւ: Պատերազմին մէջ նոր վէրք ստացած էր թեւէն, ու ատոր կ'ականարկէր Հայրիկ: Փափկանկատութեամբ վարուելով ա՛լ չուզեցի զիտողութիւն ընել թէ ե՛րբ ալ վէրք ստացաւ, ե՛րբ ալ Հայրիկ իմացաւ: Ի՞նչ ետքը իմացայ թէ Պոլիս ալ եկած է եղբր, Փափագեանէն ալ գաս առած, ու « Զէյթունցի չօլախ վարժապետը » անունով կը ճանչցուի եղբր Ղալաթիա եւ ամէն տեղ:

Քանի մը օր ետքը Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին շէնքէն Ներսէս պատրիարքը դուրս կ'ելլէր մէկ երկու եկեղեցական ու աշխարհական խորհրդականներով շրջապատուած: Ետեւէն խոնարհաբար կուգային Նիկողոս եպիսկոպոսը եւ Չաքրեան, զլուխնին կախ, տրտում: Պատրիարքը կարգը մտաւ ու մեկնեցաւ. գացի գտայ Զէյթունցիները: Ներսէս սաստկապէս կը հակառակի եղբր ապրտամբական ո՛ր եւ է խորհրդի. ուրեմն յոյս չկար, պատրիարքին ընդդիմադրութիւնը անյաղթելի ըլլալով:

Երկուքն ալ օր մը աներեւութացան: Զէյթուն նորէն

ապտամբ էր. Նիկողոս եպիսկոպոսի եւ Չաքրեանի ա- նունները բերնէ բերան կը թռչէին. ու խանդավառութեամբ կը ժողովրդականացնէի ատ անունները Մշակի միջոցաւ կովկաս: Երկուքն ալ զէնքը ձեռքերնին կուռեր ու բռնուեր էին պատերազմի գաշտին վրայ:

Շատ չանցած Չաքրեան նորէն Պոլիս էր: Ո՛ր էր թէ ան ալ, անկէ ետքը եկողներէն շատերն ալ քիչ մը նմա- նէին զինուորներուն որ կուրը լմնալէ վերջ կը վերադառ- նան իրենց արօրին: Կը թափառէր Պոլիս, առանց ինքը- զինքը ժողովրդին բռնել տալու յաջողութեան: Զիզրու Պարոն, թէ չեմ գիտեր ինչ ասանկ անունով, Զէյթու- նի երգեր կը հրատարակէր, միջազգային բարեգործական հաստատութեան մը տոմսերը կը վաճառէր, կ'իյնար կ'ել- լէր: Ու մէյ մըն ալ տեսնես ձանձրացած այս աշխատու- թիւններէն, հայ ազգը յեղափոխելու ներշնչուած կը բոր- բորէ: Հինգական դարուշնոց չորս հարիւր ոսկի արժողու- թեամբ նուիրատուներ հրապարակ կը հանէ, քանի մը ըն- կերներով, ու եկեղեցականի մը բարեմիտ պաշտպանու- թեամբ: Տոմսակը կը ներկայացնէր երկու ըմբիչ որոնք կը մենամարտէին: Մէկը՝ Հայուն խորհրդանշանն էր, մի- սը՝ Թիւրքը կը պատկերացնէր: Հա՛րկ է ըսել թէ ըմբշա- մարտին մէջ Թիւրքը Հայուն ոտքերուն տակ կը ճգմուէր: Ինչ զոհեր տարաւ այդ ըմբշամարտութիւնը: Առաջինը եղաւ սերաստացի մը: Պաշտու թաղը կուռի բռնուելով թիրբէ մը հետ, ոստիկանութիւնը կը միջամտէ, սենեակը կը խուզարկէ ու սնտուկին տակէն այդ տոմսը կը գտնէ: Մարդը « եօթը տարին կերաւ », ինչ որ կը նշանակէ՝ եօթը տարուան բերդարդելութեան դատապարտուեցաւ: Եւ ու- րիշներ, և ուրիշներ: Հարիւրաւոր էին խեղճ Հայաստան- ցիները որ մասունքի պէս կը պահէին այդ տոմսերը: Մօտ ատենները Հայոց թագաւորութիւն պիտի հաստատուէր ու այդ տոմսերը, հայրենասիրութեան վկայականներ, պիտի հարթէին պաշտօններու, նախարարութեան ճամբաները: Կը պատմեն թէ երբ Քրիստափոր Քոլումպոս նոր աշխարհը գտաւ, իր հետեւորդները նախշուն ապակիներու քանի մը կտոր ու երփներանգ լաթեր շողացնելով վայրենիներու աչ- քին անոնց ոսկիները կ'անէին ձեռքերնուն ի փոխարէն այդ սնունդութեանց: Պիտի մաղթէի որ հայ ազգն ալ այնքան խելացի, այնքան զրական միտք ունենար որքան այդ սե- ւամորթները: Լաթի մը կտոր, ապակիի մը բեկոր ոսկիին փոխարէն, ատ ալ նորէն բան մըն է, ոչինչէն ազէկ, մա- նաւանդ երբ մորթն ալ վրայ չի տար: Օ՛հ, երազանքի ժո- զովուրդը՝ այդ բարեմիտ հայ ժողովուրդը:

Երբեմն երբեմն կ'անհերուութեամբ: Ազգեցիկ յանձ- նարարութիւններով « ժողովարարութեան » համար ասդին անդին երթեկեկելէ յետոյ նորէն Պոլիս էր: Օր մըն ալ իր կովկասցի մէկ բարեկամը յաջողեցաւ զինքը Եւրոպա նե- տել: Վախ տուաւ թէ ոստիկանութեան կողմէն կը փնտրու- ուի: Չաքրեան շունչը շոգեմաւ մը առաւ: Փրկութիւնն էր: Ա՛լ շատ ինկած էր, ու իր միտքարանքը օդէն կը փնտր- ուէր, քիչ մը չափազանցօրէն: Յաւ ազգող բան մը կարատ խեղճ մարդուն զէմքին վրայ: Զէյթունցիի տիտղոսովը, որ

եզականէր Պոլիս իր տեսակին մէջ, անկարող կը գտնուէր բաղդին յաղթել: Այդ տիտղոսը Եւրոպայի մէջ բռնուեցաւ, շնորհիւ ճարպիկ ձեռնարկուներու որոնք իրական, շօշա- փելի ապտամբ մը շահագործելու գաղանիքը զիտէին: Հի- մակ հայկական ինդրի հացկերոյթներուն կը նախագահէր Չաքրեան, բարձրաձայն կը բարբառէր, Հայաստանի ա- պագան կը վճռէր:

Եւրոպան կովկաս անցնելու բնական ճամբան է: Տիտղոսաւոր հերոսը, հետը երկու թիկնապահ, կը հաննի Օտեսա: Իր ժամանումին համբաւը իսկոյն կը տարածուի հայ հասարակութեան մէջ: Դիւրաւառ երիտասարդու- թիւնը կ'ուզէ սղմել ձեռքերը թրքաստան քաջամարտիկի մը. ի պատիւ Չաքրեանի սեղանի մը շուրջը կը բուրբին ա- մենքն ալ: Ա՛լ ընթերցողին երեւակայութեանը կը թողու- մը գաղափար մը կազմել այն հայրենասիրական եւ ազատա- սիրական երգերուն և ճառերուն վրայ գործնք կը ներշնչէին վաւերական հերոսի մը ներկայութիւնը եւ հրաժարան բա- մակներու ազգեցութիւնը: Բայց հայկական միտքն իսկ պիտի տկարանայ երեւակայելու թէ հոն սեղանին վրայ տեղն ու տեղը մեր զէյթունցի վարժապետը իր երկու թիկնապահներէն թագաւոր հռչակուեցաւ, ինչպէս քսան տարի առաջ Վէրսալի պալատը իշխաններ ու զօրավար- ներ Վիլհելմը Գերմանիոյ կայսր հրատարակած էին: Եր- կու թիկնապահները նման եռոտանիին վրայ կանգնած հինաւուրց պատգամատու քուրմին, փրփրած շրթունքնե- ռով, բորբոքեալ հոգով ապագան կը մարզարէանային կիլիկեան քայլերգէն, ու կը գոռային .

Կեցցե՛ Լէռն, օճցի՛ Լէռն,
Թագ կապեցք անքս յաւնայր .
Զէյրուն շիցի մայրաքաղաք,
Եւ կիլիկիս ազնւո երկիր:

Ու ականողիքնին՝ աչքերնէն դուրս ցատքելու վրայ, բաժակը ձախ ձեռքերնին, ալ ձեռքերնուն ցուցամատը շեշտակի կը սլացնէին,

Կեցցե՛ Լէռն, օճցի՛ Լէռն...

որոտալով, զէպի այն ճակատը որ նախասահմանեալ էր Ռուսիանանց, Լուսինեանց թաղը կապելու: Թագաւոր- ցուն, վշտակիր, զգածեալ — ի հարկէ — կը հանէր զըր- պանէն թաշկինակը, բնականաբար կարմիր, եւ ուժով ու- ժով աչքերը կը սրբէր: Այդ նշանաւոր օրուան սեղանա- կիցներէն մէկը վերջերս Լանտոն այս սրտայոյգ հանգէսը մեզի նկարագրած ատեն կ'անելցնէր թէ Չաքրեան փոխա- նակ թաշկինակը քիչ մը բանալու անոր ծայրը միայն կը գործածէր: Ու երիտասարդ ժպտելով կը շարունակէր թէ Չաքրեանին աչքերը սրբուելէ վերջ կ'արցունքոտէին: Չարածճի հետաքրքրութեամբ կրցեր էր իմանալ թէ ատ ծայրը բռնաւորուած էր կարմիր սղպեղի մեծաքանակ հիւլներով որոնք աչք մը արցունքոտելու օգտակարապէս կը ծառային: Ազամեան իր վարպետը գտած էր:

Եւ իրիկուն մը 90ին այց քարտ մը բերին թիֆլիս Մշակի խմբագրատունը, վրան վսեմ պարզութեամբ մը «Յարութիւն Չաքրեան» գրուած: Երես եկաւ. բիշ մը տեսնուեցանք, հեան ալ ընկեր մը կար որ Պոլսէն ինծի ծանօթ էր: Յաջորդ օրը բարեկամի մը տունն էի. ճաշի նըստած էինք երբ այցնտուս մը բերին. տանտէրը աչքը վըրան նետելով աճապարեց ելլել, ինծի ցոյց տալով քարտը, — իշխանական թագ մը որուն ներքե ուսերէն երեք չորս բառ, ու տակն ալ հայերէն «Իշխան Չէյթունի Յարութիւն Չաքրեան», ուսերէնը «Կնիագ Արտէմ Չաքր»:

— Դուք ճանաչու՞մ էք սրան, հարցուց, պատրաստուելով իշխանը երթալ մեծարելու:

— Ճաշերնիս լմնցնենք, ըսի, թո՛ղ նստի, հոգ չէ:

Ես մեկնեցայ առանց հիւրասենեակը մտնելու. ինչո՞ւս պէտք չփութեցնէի ինզճ մարդը:

Մէկ երկու օր ետքը իրեն հանդիպեցայ հիւր սնոց մը: Հոն էր իջած ճշմարիտ յեղափոխական վանցի երիտասարդ մը, Աւետիսեան, որուն այցելութեան դասեր էի Պղտիկ խուց մը կը կենար այն ազան որ ուժեղ մտքի մը մեծ սիրտ մը կը միացնէր: Ու միեւնոյն յարկին տակ Չաքրեանն ալ էր, փառաւոր երկու սենեակ վարձած, ու այցելուն «Կնիագ Արտէմ Չաքրովիշ» պէտք էր հարցնել: Երբ անգամ մըն ալ հանդիպեցայ Չաքրեանին զիտել տուի թէ ճշմարիտ յեղափոխականները խնայողութեամբ կ'ապրին Աւետիսեանի նման:

— Ես այժմ վաճառական եմ, ըսաւ գերազանց խրոխտութեամբ:

— Ինծի՞ ալ ատանկ խօսքեր, ըսի, ու այլ թաղ, ու այլ իշխանական տիտղոս. զիտե՞ն թէ ո՛րքան սուղի կը նստին անդին կիլիկիացիներուն:

Ա՛լ չտեսայ զինքը: Ամիսներ ետքը Պոլիս սոստիկանատունը այլ իշխանական այցքարտերէն մէկը աչքիս առջև կը գնկին, ամբաստանելով զիս իբր Չաքրեանի «մեղսակիցը»:

Անկէ ետքը անունը չէի լսած երբ վերջերս իմացայ խմբագիր եղած ըլլալը: Բարեկամ մը Գահիրէ ինծի սըւաւ Չաքրեանին հրատարակած Տաշքուսին քանի մը թիւերը, որոնց մէջ կիսատ մըն ալ կար, 20րդը, երեսները կապուած, փորձերը եղած, բոյց չտպուած, վասն զի ստակ չկայ եղեր: Խեղճ Չաքրեանին կեանքին պատկերացումն էր այդ կիսատ թերթը, կիսկատար մնացած կեանք մը:

Ու հիմա իր լեռներէն հեռու, տարագիր, թագաւորցուն Պուրքէշ հիւանդանոցի մը մէջ կը մեռնի լքուած: Կարկեցութիւն մը կը զգանք այդ գմբազդին համար որ իր բոլոր ակարութիւններուն մէջ միշտ թարթարէնեան հով մը ունէր վրան: Իր դէմքը օր մը պիտի կրնայ, սրբագրութեամբ, հայ փիպատաններուն իբր օրինակ ծառայել հայ թարթարէնի տիպարը ստեղծելու:

Այդ մահուանը լուրը երբ առի մտածեցի թէ ո՛րքան բարեբաղդ պիտի համարուէր Չաքրեան եթէ քան տարի առաջ կոռի դաշտի մը վրայ գնտակէ մը նահատակուած ըլլար: Իր անունն ալ Չէյթունի Ոսկեգրքին մէջ մարտիրոսութեան մահուան ցոյացուցած սրբափայլ գոյնովը ջինջ ու պայծառ պիտի փայլէր: Ճիշդ ժամանակին եկած մահը կամ մինչեւ իսկ արկած մը շատ անգամ բազդին շոպլաձեռն պարզելը պէտք է համարիլ: Ո՞վ զիտէ ո՛ր եւ ի՞նչպէս պիտի թաղուէր վաղինակ վարդապետ մը որուն մահը Ամերիկայէն իմացուցին, եթէ ճշնաթամի օր մը արկածի մը հանդիպած ըլլարու բարեբաղդութիւնը ունեցած չըլլար: Աշրդեան Խորէն պատրիարք 1890ի խոփայոյց ժամանակները յանկարծ Հիւանդանոց նետեց բանտարկեց Եարը—Գաբուի քարոզիչը: Այդ վարդապետին անունը լսած չէի. 1891ի ընդհանուր մոռացումէն ետքը իր անունը տուին ինծի իբր կրակոտ յեղափոխական մը: Ու բարեկամական շրջանակներու մէջ շատ մոզուութիւն կը յայտնուէր ընդդէմ Աշրդեանի որ այլպիսի եկեղեցական մը ազդային բանաւ նետած էր: Պատրիարքին հետ ունեցած մէկ տեսակցութեանս ատեն, յայտնեցի իրեն զէ՛մ եղած մոզուութեան պատճառներուն մէջ նաեւ վաղինակ վարդապետ մը Հիւանդանոց խրկած ըլլալուն խնդիրը:

— Ճանըմ, զիտեն չիտեն կ'ըսեն, ըսաւ: Եթէ Հիւանդանոց չխրկէի նոր Մամբրէ մըն ալ ան պիտի ըլլար զլինուս:

Ու պատրիարքը հազարից ինծի քանի մը տեղեկութիւններ, ամենքն ալ սուտ ու բուտ, գործնք այդ վարդապետը սոստիկանութեան պիտի հազարդ եղեր եթէ պատրիարքարանէն չպաշտպանուէր:

— Ա՛լ նայէ գործը ո՛ր տեղուանքը պիտի երթար. որո՞ւ պիտի հասկցնէի թէ սուտ են: Հիւանդանոց նետեցի լմնցաւ գնաց:

Համբաւները ո՛րչափ բան պարտական են զիպուածին: Մամբրէ 1890 յուլիսէն օգոստոս թող արկածի մը զոհ գացած ըլլար, եւ պիտի հոշակուէր հայ Յեղափոխութեան սխալի անուններէն մէկը:

Ատ վաղինակ վարդապետին անունը մէյ մըն ալ չէի լսած, երբ 97 մայիսին առտու մը Բարբի սենեակս վերագարձիս գտայ վաղինակ վարդապետի այցքարտ մը. իբր կաթողիկոսին ներկայացուցի Ամերիկա կ'երթար, ու ծանուցանելով որ նոյն գիշերը իսկ պիտի մեկնէր եւ թէ հիւանդ ըլլալով չէր կրնար կրկին գալ, կը խնդրէր որ ես այցելեմ իրեն:

Միտքս չեկաւ թէ ո՛վ էր: Հետ սքրքրութիւնս եւ քաղաքաւարական պարտականութիւնը մզեցին զիս երթալ տեսնել ատ վարդապետը, սր կը կարծէի թէ շիտակ կովկասէն կուգար: Սանգուլէ մը վեր ելած ատենս ուրիշ սանդուխէ մըն ալ վար կ'իջնէր վարդապետի զգեստով մէկը, որ «Օ՛, բարի եկաք, հազար բարի» ըսելով թեւ մըտաւ ու շիտակ զոնէ մը ներս մտցուց զիս: Գէշ բան մը զգացի ատ մարդուն ի տես: Դէմքը, շարժումները, խօսուածքը ամենքն ալ կարծեցնել կուտային թէ Մամբրէն

գերեզմանէն ելած դէմ է: Ու միաքս ինկա Աշրգեանին խօսքը՝ «Մարտը մը պիտի ըլլար եթէ ձգէի»: Ա՞ն Վաղինակ վարդապետն էր արդեօք: Խօսակցութեան մէջ հասկցուց թէ նոյն ինքն է եղեր:

Մենեակին մէջ բազմութիւն կար. երկու վարդապետաւս, եւ ուրիշներ ալ կը գտնուէին: Ու ծուխին եւ մուխին մէջ, ազմկալից խօսակցութիւններուն մէջ Բարիզի աստ սենեակը Պոլսոյ պանդուխտներու խանի մը տարօրինակ սպառութիւնը կը թողուր: Միւս վարդապետները մէկը խաղ վարդապետ ըսին. չէի ճանչնար. եւ միւսը Մաշթոց վարդապետ: Ա՞ն կը ճանչնայի, Արմաշցիներէն էր: Վարդապետորդի մը որ հաշուելով կը խօսէր, զգուշաւոր: Մեղադրելու բան մը չէր: Իսկ աս Վաղինակ վարդապետին ինչ ըլլալը քառորդէ մը հասկցայ: Անոնցմէ էր որոնց գլխուն համար կը խօսուի թէ «վերնատունը մարդ չկայ»: Կը խօսէր բարձրաձայն, կը պոտար, կը նստէր, կ'ելլէր, դիւահարի պէս բան մը. շատ կը զուարճանայի, եզակի աւար մըն էր: Ու երկու խօսքին մէկը՝ «Նայեցէք ինչեր պիտի ընենք, Պալա կրակի պիտի տանք չորս կողմէն, ամէն բան օղբ պիտի հանենք» կը խօսէր: Քիչ հաքը երբ օգոստոսի վիժուած տեղի տնեցաւ, հասկցայ թէ աս սնապարծական յիմարութիւնները ինչ կը նշանակէին: Երբ ճաշի ժամանակը եկաւ եւ ուզեցի մեկնիլ, ազախց որ իրիկուան նորէն այցելեմ. ինքն հիւանդ էր, չէր կրնար շարժիլ, եւ շատ կ'ուզէր կրկին հետս տեսնուիլ: Իրիկուան նորէն գացի:

Ամերիկա կ'երթար աս վարդապետը. ու հոն հաւաքուած Հայաստանցի ժողովրդի մը խելք պիտի սորվցնէր, իրենց վիճակը բարուրելու ճամբուն մէջ պիտի առաջնորդէր անոնց. իր խելքին շափն ալ որքան աւելի ճիշդ դիտնայի այնքան աւելի լաւ էր, մանաւանդ այն տիպարներէն էր որոնք միշտ առձեռն չեն գտնուիր: Տեսակ տեսակ նիւթերու վրայ խօսք կը բանայի. 1896 օգոստոսի զէպքին առթիւ ըսի թէ այդ առթիւ Կեղերնական վարժարանին փակուած ազգին էն մեծ կորուստներէն մէկը եղաւ, անփոխարինելի կորուստ մը: Մարդը դիւահարի պէս վերցատեց:

— Ինչ կ'ըլլայ որ պարտքը գոցուեր է, կը պոտար, պարտքը ինչ պիտի ընենք. մեզի խելք պէտք չէ, խելք պէտք չէ:

— Հապա ինչ պէտք է, հայր սուրբ:
— Չգացում, զգացում:

Չապշեցայ. անոնցմէ էր որոնք խելքին բնածին թըշնամիներն են: Քանի մը խոշոր բառ, քանի մը բացազանչութիւն, ահա իրենց զրամազուխը զոր զգացում կ'անուանեն:

Ու սկսաւ խօսիլ ապստամբութեան վրայ. նահանգներ կը բաժնէր, ո՞րը առաջ ո՞րը ետքը պէտք է ազատել:

— Ռո՞ւմբ, թնդանօթ, ո՞ւմբ, թնդանօթ, ահա ինչ որ մեզի պէտք է, պարտքը ինչ պիտի ընենք: Ա՛խ, մէկ թնդանօթ մը սենեայինք, թնդանօթ մը, ամէն բան կը փրկուեր, կը տանէինք վարը, կը յաղթէինք:

— Հայր սուրբ, ես քեզի ֆրուր մը կրնամ ճարել, ինչ կ'ըսես:

Դեմքը սկսաւ փալլիլ, ոգեւորուեցաւ, կը ցնծար:

— Հա՛, սանկ խօսէ նայի՛նք, ըսաւ ինքնիրմէ դուրս ելած. նայէ՛, ճշմարիտ յեղափոխականը ատանկ կը խօսի: Մարդուս երակը գտած էի:

— Աղէկ, հայր սուրբ, բայց աս ֆրուրը ընամօր երկիր պիտի մտցնես:

— Բան մը չէ՛, դուն թնդանօթ ըսէ:

— Լա՛ւ. մացնելդ ետքը, դորձածո՞ղբ:

— Ինչ ալ բարակները կը մամասա. ապրին մեր կրտսի՞ տղերքը:

— Բայց մէկ թնդանօթէն ինչ կ'ըլլայ, թիւրքերը շատ ունին, ուրիշ ալ պէտք է անոնց դէմ:

Այլ ձեռքը վեր վերցուց, բռունցքը գոցած, ու ակասները կը ճտելով, օղին մէջ սպառնական նշաններ ըրաւ: Հասկցայ. տասը թնդանօթին դէմ բռունցք պիտի հանէր:

Գրողի մը համար աննկարագրելի հաճոյք մըն է հանդիպիլ այսպիսի տիպարներու որոնց նմանը իրականութեան մէջ երեւակայել զրեթէ անհնարին պիտի ըլլար: Այլ կարելի չէր որ աւելի խելացնոր բանդադուշանք մը գուրս ցատքէր այդ խելապատակէն. ուստի մնաք բարովս ըսի եւ մեկնեցայ:



Վաղինակ վարդապետին մահուան լուրը երբ առի, այդ օրուան տեսակցութիւնն ալ յիշեցի: Ու գաղափարներու լծորդութեամբ կամաց կամաց միտքս եկան ուրիշ խօսակցութիւններ ալ, աչքիս առջեւ պատկերացան ուրիշ դէմքեր ալ, հին ու նոր, քսան տարուան կեանքէ, յեղափոխական, պահպանողական, քաղաքագիտական ամէն ձեւէ, ամէն տեսակէ: Ամենքն ալ աչքի դարձող տարօրինակ նմանութիւն մը, ճիշդ նոյնութիւն մը երեւան կը բերեն: Հատ մը իբր օրինակ յիշեմ, բոլորովին տարբեր միջավայրէ մը, քաղաքագետներու շրջանակէն անուած:

Սան-Սթեֆանոյի դաշնագրէն ետքն էր. մեր պատուիրակները Բեյրութով, Բարիզ, Լոնտոն գացած էին, ետքէն Պերլին հաւաքուելու համար: Գիշեր մը Օրթազեղ թաղին քաղաքական երեւելի անձնաւորութիւններէն սմանք սրահի մը մէջ անկին մը նստած կը խօսէին ազգային օրուան ինքզիններուն վրայ. ես ալ քովերնին, եւ միայն ուշադիր մտիկ կ'ընէի: Յայտնի է թէ Օրթազեղցիները ազգային դործերու մէջ առաջնակարգ ազգեցութիւն սենեցած են միշտ, մանաւանդ Ներսէս Պատրիարքին աստնը: Նոյն գիշերը ընդհանուր տեսութիւններ կը պարզուէին, կարծիքներ կը յայտնուէին պատգամաւորներու պաշտօնին և անոնց դիմումներուն հաւանական յաջողութեանը վրայ: Ներկայ գտնուողներէն մէկը որ մտերիմ յարաբերութեան մէջ էր Ներսէս պատրիարքին եւ բոլոր այդ շրջանակին հետ, ամփոփ կերպով պարզեց «իրենց» քաղաքականութիւնը: Բառ առ բառ կը յիշեմ ինչ որ ըսաւ. ճիշդ ու ճիշդ

առաջ կը բերեմ.

—Էֆէնտի՛մ, կ'ըսէր լայնաշունչ ծխելով սիկառը, խորէնը Բեկրպուրի խրկեցինք. ան վարպետ մարդ է, գիտէ Կորչաքոֆին ինչ պիտի ընէ. աղւորիկ մը կարգի կը բերէ: Պիտի հասկցնէ թէ Հայերը ուսասէր են, միշտ Ռուսիոյ համար կ'աշխատին, ազատուած Հայաստանը Ռուսիոյ հաւատարիմ՝ գաշնակիցը պիտի հանդիսանայ եւ անոր յառաջապահը: Թո՛ղ Կորչաքոֆն ալ անանկ հաւտայ. էֆէնտի՛մ: Եւ եթէ Անգլիա ալ մարդ խրկեցինք նէ, պիտի ըսէ, մեր ուսասիրութեան վրայ կասկած չհրաւիրելու համար քաղաքականութիւն մըն է: Ա՛լ խորէնը իր մարդը կը լօլօզէ: Խրիմեանն ալ Գաղիան ու Անգլիան աղէկ մը կը խաբէ: Պիտի հասկցնէ թէ Հայերը երբեք ուսասէր չեն կրնար ըլլալ, Ռուսը ազգակից է, Հայոց ալ թշնամին է: Բայց եթէ Բեկրպուրի պատգամաւոր խրկած ենք, պատճառը յայտնի է, Ռուսիոյ միտքը հանդարտեցընելու համար է, անոր կասկածը չհրաւիրենք որպէս զի եւրոպական պաշտպանութիւնը զիւրանայ Հայոց անկախութեան համար: — Ու ձախ ձեռքին հինգ մատերը ամփոփելով — Հէ՛, աղւոր չէ՛ աս քաղաքականութիւնը: Կորչաքոֆն ալ, Պիքոնսֆիլյան ալ, Վատինկիմանն ալ կը խաբենք: Իսկ Պիզմարքը...» Ու մեր զիւանագէտը ձախ ձեռքը երկու անգամ բանթալոնին գրպանին զարկաւ, ինչ որ վսեմօրէն կը նշանակէր թէ Պիզմարքը հոն է, իր գրպանին՝ այսինքն Հայոց գրպանին մէջ: Ու ներկայ դտնուող պզտիկ բայց ընտրեալ շրջանակը միաձայնութեամբ վաւերացուց այս քաղաքականութիւնը.

— Թա՛մամ, նայէ՛ իշտէ ասանկ ընելու է:

Հայ քաղաքագէտին համար՝ Պիզմարքը իր գրպանին մէջն է, հայ յեղափոխականին համար՝ Քրուրը իր ափին մէջն է, եւ ինչո՞ւ չազատի Հայաստան: Իրաւ է որ այս տեսակ քաղաքագէտին ալ, այն տեսակ յեղափոխականին ալ քով տարակոյտի հարցական մը աւելորդ պիտի չըլլար, բայց ինչ օգուտ. առաջնորդներ են ասոնք, ու հարցականը բան մը չի փոխեր մտքերու մէջ: Ու պարագաներու բերձամբ թո՛ղ Վաղինակ վարդապետը քաղաքագէտներու շրջանին մէջ մտած ըլլար, ինքն ալ իր ուղեղին կազմակերպութեամբը Պիզմարքը Հայոց գրպանին մէջ պիտի տեսնէր, եւ եթէ քաղաքագէտը Վաղինակեան յեղափոխականներու շրջանակին մէջ մտնէր՝ ինքն ալ բռունցքը Քրուրին զէ՛մ պիտի հանէր: Օ հ, ազգային ուղեղին կազմակերպութեան մէջ միայն պատասխանատուներ փնտրուենք: Եւրոպացի գիտուններ Հայաստան կ'երթան եւ մեր նախահայրերու գանկերը գտնելով կը չափեն կը չափչփեն, գուշակութիւններ կը հանեն. եթէ քիչ մըն ալ արդի հայերուն գանկերը քննէին: Կարծեմ թէ ամէնու ալ, հինին ալ նորին ալ, տիրապետող կարողութիւնը երեւակայութիւնը պիտի դտնեն:

* * *

Ու երեւակայութիւնը անդին հայրենի երկրին մէջն է. սարսաղակցիկ վրձիններ երբեմն երբեմն անոր պատկերը

մեզի կը ներկայացնեն պահ մը երազանքներէ սթափեցնելու մեզ: Բարակ տեարակ մը, «Պատկերներ մեր կեանքէն» վերնագրով, զոր մեր Վ. Շահէնին գրած է, ահա Ամերիկայէն կը հասնի, ու իրականութեան արտմութեամբը կը համակէ ընթերցողը: Այլ չորս պատկերներէն միայն մէկուն առջեւ կանգ կ'առնեմ: Պարզ պատմութիւն մը առանց գրական պերճանքի, որ քանի մը զձերով իր մէջ կը խտացնէ հայ հոգիին տառապանքները:

Հարկահանն է որ հայ գեղերը կը պտըտի, վայրագ բարբարոսութեամբ: Եթէ այդ թիւրք պաշտօնեան կորովի, գեղանի, քաջ դազանի մը կերպարանքով ներկայանար սրտնեղութիւնս գուցէ նուազ ըլլար. բայց քօն-չափուն է, բիս, քոսոս, կեղտոտ, ու ատոր ոտքին տակն է որ ազնուատու՛մ ժողովրդի մը հոգին կը ճգուի: Զայրոյթը չէ որ սիրտդ կը պայթեցնէ, զգուանքն է որ զայն կը խառնակէ:

Հինգ էջի մէջ Հայաստանի գեղացիին հինգ դարու պատմութիւնն է գուցէ ամփոփուած, անդադրում շարունակող պատմութիւն մը, ու անոնց մէջէն էն պզտիկները կ'ընտրեմ, անոնք որոնցմէ արիւն չի վազեր, եւ սակայն սիրտդ կ'արիւնտտեն, վասն զի հոգիին տանջանքները կը պատմեն:

Քօն-չափունը գուպաներ ալ կը ժողովէ գեղէն. կառավարութիւնը գուպայ չի տար իրեններուն, ժողովուրդը պիտի հոգայ այդ պէտքը: Ռէս Աւետիսը երկու կապոց կը բերէ. բայց աս շատ քիչ է: Գոյուշը մնացողները գուպայ կ'ուզեն, անեցիները գուպայ կ'ուզեն. քօն-չափունը դեռ քոսուն զոյգ ալ կը պահանջէ: Գզիրը գեղ կ'երթայ, կը հարցնէ, կը փնտռէ, քօն-չափունը հրամանը կը հաղորդէ. ու հազիւ կրնայ մէկ երկու զոյգ ճարել: Եւ ւարած կը մնայ. Եթէ չճարեն գուպայ, բոլորն ալ պիտի մորթեն: «Հաննց Մոկացի հարսը իր ոտքի գուպան ու ասաց. — Տարէ՛ք, թող այն անզգամների ձայնը կտրի: Շատերը նորա օրինակին հետեւեցին:» Եւրոպացի դորժաւորներուն տառապանքները կը նկարագրեն մեզի, որոնցմէ ընկերվարութիւնը կը բղխի. բայց ո՞ր եւրոպացին դադափար մը ունի այսքան նրբացեալ, այսքան ահեղ տառապանքին վրայ: Համեստ, ու ամչկոտ հարսը որ իր ոտքին գուպան քօն-չափունը կուտայ:

Քօն-չափունը օղի կ'ուզէ գեղացիներէն.

— Ռէս Աւետ, ասաց չափունը, դու լաւ հայ ես, խօմ մեզի առանց արաղի չես թողուր:

Խեղճ գեղացիներուն գեղը ո՞ւր կից օղի պէտք է զըտնուի:

— Չափուն էֆէնտի, քո ոտքիդ դուրբան եղնիմ, կը պատասխանէ Ռէսը, Ալլահ թող վկայ լինի, որ մօտ մի տարի է պուտ մը արաղ մեր գեղ չէ մտել:

Եւ ընթերցողը կը սպասէ որ չափունը ծեծէ, սպաննէ Ռէսը: Օ հ, մինչեւ իսկ մեռցնելն ալ շատ հասարակ գիւտ մը պիտի համարուէր: Դիւաշունչ պահանջում մը կ'ընէ քօն-չափունը: Եթէ օղի չի կայ գեղը, բայց գինի կայ անշուշտ. Հայոց եկեղեցիները պատարագի համար միշտ

գինի կայ, եւ չափուշը կը պահանջէ որ ա՛տ գինին իրեն բերեն: Խօսքը կը թողում հեղինակին. «Սոսկացին ա՛մենքը, զողացին ամենքը, սակայն ո՛վ կարող էր ըօռ—չափուշի հրամանը չկատարել: Գնաց ժամահարը, բաց արեց եկեղեցւոյ դուռը, արտասուտաբան աչքերով կանգնեց սուրբ սեղանի դիմաց, անշուշտ մի քանի խօսքեր մտնեցին... Աստուած... ասաց ու բարձրացաւ սեղան, վեր առաւ սեղանից գինու շիշը, պուտ մը կաթեցոց սկիհին մէջ, որ անժամ ու անպատարազ չմնան... բերաւ շիշն ու չափուշի առաջ դրաւ:

—Միշտ այդպէս, ասաց չափուշը:

Ամենքը սարսոցեան, կարծես երկնքից կրակ մաղթեցին բոլորին վրայ: Իրենց սրբութիւնը, իրենց պատարագի գինին անօրէնը իր պիղծ շրթունքներին պիտի մօտեցնէր: Էլ ո՛ւմ սիրտը կտոր կտոր չեղաւ. սակայն ամենքն էլ քար կարեցին իրենց տեղեր. մէկը միայն երեսը շուտ տուեց այն կողմը, պուտ մը արցունք թափեց եւ մտնեց: Մինչեւ ե՛րբ, Աստուած...»

Ու մեր երկիրը այդ «մինչեւ ե՛րբ Աստուած»ը կազազակէ իսլամութեան ծագումէն ի վեր: Եւ կը հաւատայ թէ «երբ»ը իր վախճանը պիտի ունենայ: Այդ հաւատքով զօրացած, հայ ժողովուրդը հազար տարիներ կը դիմանայ ըօռ—չափուշներուն: Հայուն արի եւ տոկուն առաքինութիւնն է որ ամէն աղէտներու մէջ կը զօրացնէ հայութիւնը եւ յառաջ կը մղէ դէպի «ե՛րբ»ը:

ՀՐԱՋԳԻԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

2

Հայաստանի զարգացումին աշխատող Կ. Պոլսոյ ընկերութեանց ծախքերը թիւրքիոյ Հայոց առօրեայ նուիրատուութիւններովը կը հայթայթուէին. միայն Արարաեան ընկերութիւնը ուստահպատակ Հայոց ալ աջակցութիւնը կը վայելէր: Մտածեցինք Պոլսոյ մէջ մէկ ձեռքէ կարելու գումար մը ստանալ, եւ իբր նպատակայարմար միջոց՝ պարահանդէս մը տալ որոշուեցաւ: Արարատեանի քանի մը անպաճեցող 1878 նոյեմբերին միանալով Գործադիր ժողովին հետ, խորհեցան պարահանդէսի մը յաջողութիւնը ապահովելու միջոցներուն վրայ: Տակաւին փորձառութիւնը կը պակսէր մեզի, ուստի եւ պարահանդէսի մը արդիւնքներու մասին մեր լաւատեսութիւնը 300 ոսկիի սահմանէն անդին չէր կրնար անցնել: Հանդէսին համար հովանաւորութեան մը պէտքն ալ զգացուեցաւ: Արթին պէյ Տատեանի անունը առաջարկուեցաւ: Երբ ես Ֆրանսական զեպանին հովանաւորութիւնը խնդրելու կարծիք յայտնեցի, ենթադրուեցաւ թէ պարզապէս կա-

տակարանութիւն մը ընել կ'ուզէի: Նոյն աստիճանները Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը, Վատինկթան, Երեսփոխանական ժողովին մէջ արտասանած մէկ ճառովը հայկական դատին շատ նպաստաւոր երեւցած էր, ուստի կրնայի ենթադրել թէ Կ. Պոլսոյ ֆրանսական ներկայացուցիչը սիրայօժար իր աջակցութիւնը պիտի նուիրէր Հայաստանի բարեւաւորութեանը ծառայելու սահմանուած ձեռնարկի մը յաջողութեանը: Փաստերս սակայն թուի թէ բաւական համոզիչ չերեւցան: Փորձառութիւնը դեռ կը պակսէր մեզի, եւ ամբողջ զեկտեմբեր ամիսը խորհրդակցութիւններով անցուցինք: Դեկտեմբեր 30ի կիրակի օրը Արարատեանի Ընդհանուր ժողովը զուարուստ էր. ուշ ատեն կեսարացի ընկեր մը Բերայէն գալով մտերմաբար ինձի հաղորդեց թէ նոյն օրը Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը եւ Դպրոցասիրաց-Արեւելեան ընկերութեան տնօրէն մարմինը իրենց տունը խառն ժողով զուարելով պարահանդէսի մը կարգադրութիւնները ըրած են, Այգլիոյ զեպան Լէյարտի հովանաւորութիւնը արդէն առաջ ըլլալով: Այս տեղեկութիւնները զիս շատ յուզեցին: Մեր նստին աւարտումէն յետոյ Գործադիր ժողովը եւ քանի մը ընկերներ առանձին խորհրդակցեցանք, եւ որոշեցինք յաջորդ օրը Ղալաթիա Աղեքսանդր Մէրեթ-Գուլիի սենեակը հաւաքուիլ: Երիտասարդ փաստաբանը արդէն մեզի խորհրդակցից էր պարահանդէսի գործերուն մէջ: Եռանդուն, լրջամտ, սրտի տէր երիտասարդ մըն էր, առաջին անգամ զինքը տեսայ այդ կաղանդի օրը, եւ շատ համակրեցայ: Երկու տարի առաջ խեղճը մեռաւ Լօզան. իր մահուանը լուրը շատ ցաւ ազդեց ինձի:

Յունուար 1ի երկուշաբթի օրը շատ մը խորհրդակցութիւններէ յետոյ, որոշուեցաւ Ֆրանսայի զեպանին հովանաւորութիւնը խնդրել: Ես կը պնդէի թէ Հայաստանի կրթութեան ի նպաստ զեպանի մը հովանաւորութեամբ առաջին պարահանդէսը պէտք է Արարատեան ընկերութիւնը տայ: Այս պահանջուն շատ տարօրինակ երեւցաւ Մէրեթ-Գուլիին որ ըսաւ.

—Կը զարմանամ թէ ի՛նչպէս ատանկ մտածութիւն մը կ'ունենաս: Միւսները արդէն զեպանի մը հովանաւորութիւնը ապահոված են, յանձնաժողովը կազմուեր է, եւ անշուշտ այսօր իսկ կը սկսին զործի եւ հանգանակութեան ձեռնարկել. մինչդեռ մենք բան մը չունինք, եւ ես գոհ պիտի ըլլամ եթէ կարենանք գոնէ պարահանդէսը տալ, թէեւ ուշ: Մենք շատը շատը Միջինքին կրնանք պարահանդէսը կազմակերպել:

Ես սակայն խօսք չէի հասկնար. կա՛մ առաջին, կա՛մ ընաւ: Հայկական խնդրին է՛ն տաք ժամանակները զեպանական հովանաւորութեամբ պարահանդէս մը իր սեփական մէջ նորութիւն մըն էր, մտքերու վրայ խորապէս ազդելու կոչուած. կրկնութիւնը տկարացնելով նորութեան հրապոյրը, շատ պիտի չափաւորէր նաեւ այն բոլոր առաւելութիւնները զոր Արարատեան ընկերութիւնը կը նախատեսէր այդպիսի ձեռնարկէ մը: Ու կը մտածէի մանաւանդ կովկասը, ուր ցնցողական ազդեցութիւններ պի-

տի ունենար Հայ ընկերութեան մը վրայ տարածուած եւ րոպական պաշտպանութեան մը տեղեկութիւնը: Այս մը տաճութեանց ճնշումին տակ ծայրայեղ կերպով պնդեցի առաջնութեան խնդրին վրայ: Այլ դիմադրելու կարողութիւն չմնաց միւսներուն վրայ, ուստի հաճութեամբ յանձնաւու եղան ամէն հնարաւոր միջոց գործադրել առաջնութիւնը ապահովելու համար:

Մեզի համար սակայն կարեւոր էր գիտնալ Հիւանդանոցի եւ Դպրոցասիրաց պարահանդէսին համար որոշուած օրը, բան մը որ գաղտնի կը պահուէր: Բայց զբնուարութեան մէջէն ելլելու կարող եղանք: Յիշեցուցի թէ Անգլիոյ թագուհիին աղջիկը, իշխանուհի Ալիսը, երեք ամիս առաջ մեռած էր, եւ Անգլիոյ արքունիքը երեք ամիս սուգի մէջ պիտի մնար. բնականաբար ներքի չէր Վիկթորիա թագուհիին ներկայացուցիչ Լէյարտին պարասրահ մը ներկայ գտնուիլ պաշտօնական սուգին տեւողութեանը. ուստի եթէ կարելի չէր գիտնալ պարահանդէսին տրուելիք օրը, բայց հնար էր գիտնալ թէ մինչեւ երբ պիտի շտրուէր: Հետեւաբար փնտաւուք մը ընելով տեսանք թէ յունուար 19 31ին կը վերջանայ սուգին տեւողութիւնը. ուրեմն մինչեւ այն օրը անկաշկանդ կրնայինք գործել: Որոշեցինք 1879 յունուար 19 31 ուրբաթ օրը Արարատեանի պարահանդէսը տալ: Անմիջապէս գործի սկսելու էր:

Միւս օրը Պ. Մ. Չերազէն խնդրուեցաւ Ֆրանսայի դեսպանին հովանաւորութիւնը առնելու միջոցները դիւրացնել: Պ. Չերազ Հայոց պատրիարքին բարտուղարութարգմանի այցաբարտուիլը դիմեց Պ. Ֆրանսիէի, եւ յունուար 5 հինգշաբթի օրը պատգամաւորութիւն մը Պ. Չերազի առաջնորդութեամբ ֆրանսական դեսպանատունը դնաց, տանելով սքանչելի ուղերձ մը զոր Աղեքսանդր Մէրեկմ-Գուլի խմբադրած էր: Պ. Չերազէն զատ պատգամաւորութեան միւս անգամները երեքն ալ Ֆրանսայի Իրաւագիտութեան վարժարանէն վկայեալներ էին, ինչ որ հաճելի տպաւորութիւն մը թողուց դեսպանին վրայ: Պ. Ֆրանսիէ Հայոց համար Ֆրանսայի համակրանքը յայտնելով շատ ուրախ եղած էր որ պիտի կրնար աջակցել Հայաստանի զարգացումը իրեն նպատակ ունեցող ընկերութեան մը յառաջդիմութեանը:

Պ. Ֆրանսիէի հովանաւորութիւնը ապահովելով կարելի եղաւ անմիջապէս պարահանդէսի պատրաստութեանց ձեռնարկել: Ծնունդին օրը, յունուար 6, Գործ. ժողովին անդամներէն ոմանք եւ Աղեքսանդր Մէրեկմ-Գուլի շարաշար աշխատեցան: Պարահանդէսին օրը որոշեցին յունուար 19 31, վարձեցին Բերա Վէրտի սրահը, հայ տըպարան մը բանալ տուին եւ պարահանդէսին տոմսերը տպագրեցին: Մերեկմ-Գուլիի առաջարկութեամբ տոմսակներուն գինը 20 ֆրանք զրուեցաւ: Յունուար 7էն 9 յանձնաժողովը կազմուեցաւ, ատենապետութեամբ Սերվիլէնի, եւ Մերեկմ-Գուլի Աղեքսանդր ատենադպիր: Օտարազգիներէն կ'անդամակցէին Թաւնի եւ Տեպաի թղթակիցները Տօմանձե եւ Լը Շվալիէ: Պոլսոյ երոպական հաստատութիւնները շատ նպաստեցին. Պանք Օթոման

50 ծովանեան եւ Գրէմի Լիսնէ. 50 ֆրանսական ուկիտուին: Յանձնաժողովի եւ Գործ. ժողովի անդամներէն ոմանք շարաշար աշխատեցան. ո՛չ ցորեկ ունէին ո՛չ գիշեր: Պոլսոյ պէս քաղքի մը մէջ աւաներկու օրէն ահագին պարահանդէս մը կազմակերպելը երեւակայութեանէ զուրաբան է, եւ մէյ մըն ալ ապանկ երեսոյթ շտեմնուեցաւ:

Չմբան հրաշարի գեղեցիկ գիշեր մըն էր այդ յունուար 19 31ի գիշերը: Պոլսոյ ամէն թաղերէն, նորահաս ընտրեալ երիտասարդութիւնը Բերա թափած էր: Պարահանդէսը կրնար ընտանեկան համարուիլ, Հայ ընկերութեան բարեկեցիկ դասակարգը իր էն աչքի զարնող անպատկերով ընկերայ էր: Հայ էֆէնտիներն ու պէյերը ամենքն ալ վազն ի վազը եկած էին, Ֆրանսայի դեսպանին աչքին իբր հայ ազգին հրեւելիները ներկայանալու համար: Երբ Ֆրանսայի դեսպանը պարասրահը մտաւ նոյազարանք անմիջապէս Մարսէյեցը թնդացուց: Դեսպանը իր օթեակին մէջ ոտքի վրայ, ինչպէս նաեւ բոլոր օթեակներուն հանդիսականներն ալ, և սրահին ռազմութիւնը մէկէն ի մէկ կանգ առած, ունկնդրեցին Ֆրանսայի ազգային երգին: — Համիտիէ քայլերգով — կամ գայլերգով — հայկական պարահանդէս մը ողջունելու բոնաբարութիւնը դեռ չէր սկսած: Յետոյ ալ պարերը սկսան. խանգալառ սգեւարութիւնը կը տիրէր: Կ. Պոլսոյ ազգային կրթութեան պատգամութեան մէջ առաջին անգամն էր որ Հայոց էն սիրելի ազգին զրօշակին ներքեւ Հայաստանի զարգացումը կը ծափէինք:

Պահ մը ամէնուն աչքերը յառեցան օթեակի մը վրայ: Ֆրանսական դեսպանը այցելութեան դացած էր տիկին Չարուհի Համամձեանին, զարգացած, կրթուած իզմիրցի կին մը որ Բերայի երոպական ընկերութեան մէջ մեծ անունով մը կը փայլէր: Ուշագրաւ էր նաեւ օսմանեան ծառայութեան մէջ գտնուող Հայ էֆէնտիներուն փութիւտութիւնը, դեսպանին հաճոյալի բրեւնալու համար: Մեծ-հանգստին ատենը Կոստան փաշա, Նուրեան անբաժան էին դեսպանին քովէն, եւ շիտակն ալ արժանաւայել ընդունելութիւն կ'ընէին: Սրահը Հայ տունը կը համարուէր, եւ իրենք ալ տանը հիւրամեծարները: Օ՛հ, յաշողութիւն մը ի՞նչպէս ամէն բան մտցնել կուտայ: Արատեանի Գործադիր ժողովն ալ ներկայացաւ դեսպանին, որ շատ բաջալերական կերպով խօսեցաւ Հայաստանի մասին: Ու միջոց մը յայտարարեց թէ ճիշդ այդ րոպէին հեռադիր սուացած էր Բարիզէն թէ Պ. Կրէլի Հանրապետութեան նախագահ ընտրուած է:

Սրահը պարապ եղած ատեն հանդիպեցայ Մերեկմ-Գուլի Աղեքսանդրին որ կարծես կը թռչէր:

— Էհ, էհ, ըսի, առաջինը կը տրուի՞ եղեր մի չի տրուիր:

Պինդ մը գրկեց զիւ ուրախութեանէն մոլորած: « Հիմա կը հաւատամ թէ դուք շատ բան պիտի կրնաք ընել » ըսաւ: Առտուան դեմ պարերը վերջացան: Բերայի քաֆէները լեցուեցանք քիչ մը հանգստանալու համար: Օրը շաբաթ էր, եւ պէտք էր գործի երթալ, աշխատիլ, հաշուել,

յնգնիլ. բայց ո՞վ գիտէր թէ յոգնութիւնը ի՞նչ է:

Կիրակի օրը առաջին գործս եղաւ այդ հանդէսը Մշակի նկարագրել: Եթէ այդ հին թերթերը ձեռքս անցնէին օր մը, հոն արձանագրուած կը մնան Կ. Պոլսոյ ազգային ամէն օրուան կեանքին հետ եւ մեր սրտերու արօփումները:

Բարեղի մեծ թերթերն ալ փութացեր էին զեղեցիկ նկարագրութիւններ գրել, Մշակ ատոնք ամենքը թարգմանեց: Ինչ խանդավառութիւն տիրեց Կովկաս: Արարատեանի համար սէրը սաստիկացաւ, եւ Արծրունի իր գործը յաղթանակաւ առաջ կը տանէր, վստահ ըլլալով Պոլսեցի երիտասարդութեան վրայ:

Շարաթ մը ետքն ալ Գալստիացիներն ու Հիւանդանոցի հոգաբարձութիւնը միացած պարահանդէսը տուին, Անգլիոյ զեսպանին հովանաւորութեամբը: Այն գիշերն ալ շատ զեղեցիկ էր, ու երեկոյթը պերճ ու շքեղ եղաւ: Հայ ժողովուրդը այդ թուականներուն ամբողջ խանդ, եռանդ, ոգևորութիւն էր Պոլիս. ո՛չ ոք նեղութիւն, ձանձրոյթ կը զգար:

Երկու պարահանդէսները հազարական ոսկի արտադրեցին: Ո՛րչափ հեռու էինք մեր երեք հարիւր ոսկիի զուշակութիւնէն: Հասոյթի այդ գումարները շատ լաւ տրպատրութիւն առաջ բերին Կովկաս:

Նոյն 1879ի ամառը գաշապին պարահանդէս մըն ալ տալու փափաք յայտնուեցաւ: Յանդիւնութիւն մըն էր քանի մը ամուսնու ժամանակամիջոցին երկու անգամ յանուն միեւնոյն ընկերութեան ժողովրդին գիմել, բայց Արարատեանի վայելած համարումը, ազգին հոգեկան տրամագրութիւնները, Հայաստանի վերածննդեան հաւատքը ո՛ր եւ է խորհուրդ, ո՛ր է ձեռնարկ հնարաւոր կ'ընէին: Գատրղեցի երիտասարդներու նախաձեռնութեամբ յանձնաժողով մը կազմուեցաւ ատենապետութեամբ Օտեանի կ'անդամակցելին Պօղոս Նուպար, Ներսէս Ներսէսեան, Միքայէլ Փորթուպալ, Կարապետ Շահպազ եւ ուրիշներ: Այս երկրորդ պարահանդէսին համար ալ օսմանեան անձնաւորութեան մը հովանաւորութիւնը առնել խոհեմութիւն համարուեցաւ: Օտեան խնդրեց Սատրապամ Արիֆի փաշային — որ այդ ժամանակ Պաշ-Վէբէլ տիտղոսը կը կրէր — հովանաւորութիւնը: Յանձնաժողովին առաջին նիստերը տեղի ունեցան Արարատեանի գրասենեակը, Ղալաթիա կէօշէ օղլու խան, ուր մէջէ մէջ երեք սենեակ վարձուած էր: Առաջին գումարումին ներկայ էին օտարազգի անգամներն ալ: Ժողովին վերջ Կարապետ Շահպազ զոհոնակութիւն յայտնեց որ կրթական ընկերութեան մը պաշտօնատունը այնպիսի յարմարութիւններով օտուած է, որ երբ օտարազգիները հոն կուզան, հայ ազգը չ'ամչնար:

Մէյմէկ սոկինոց ասմուր տպուեցան. հանդէսը տեղի պիտի ունենար Պէօյիք-տէրէ Մըսթըլը Օննիկ պէյի պարտէզը, սեպտեմբերի գիշեր մը. պէտք էր ընդունիլ թէ բաւական վտանգաւոր ձեռնարկ մըն էր: Գաշտի մէջ գիշերային պարահանդէս վը կատարուի ունի. օգէն. անձրեւ

մը, հով մը եւ ահա կը խանգարի կը ըմնայ. ու պէտք էր նախապէս 250 ոսկի ծախս ընել. դոց սրահ մը վարձելով պարահանդէս տալը թէ՛ քիչ ծախքով կ'ըլլար եւ թէ՛ ամէն ապահովութիւն կ'ընծայէր: Այս մտատանջութիւնները անգամներուն մտքերը գրաւած էին. բայց եւ այնպէս «առանց վտանգի յաջողութիւն չի կրնար ըլլալ» սկզբունքը առաջնորդեց մեզի:

Կ. Պոլսոյ Հայոց տարեգրութեան մէջ երկար ատեն չ'ուղեցուցաւ յիշատակն այդ սեպտեմբերի կիրակիին, որ աննման հրճուանքի օր մը եղաւ: Ան առտուն երկինքը սուպուտ էր, ու ամէնուտ սիրտը զոդի մէջ, բայց ամպերուն հետ վախն ալ փարաւեցաւ: Մենք կը մնայինք Ղալաթիա գրասենեակը ուրիշ անգագար յարաբերութեան մէջ էինք Պէօյիք-տէրէ գաշապին հանդէսին աշխատողներուն հետ: Օտեան, հետը ունենալով Պօղոս Նուպար եւ Ներսէս Ներսէսեան, ու յունական զեսպանատան շոգենախն քանի մը պաշտօնեաները, միասին կ'աշխատէին պատրաստութեանց: Սպարապետութեան զոնէն նոյն օրն իսկ ահագնածաւալ վրան մը բերուեցաւ Պէօյիք-տէրէ. Աբրահամ փաշա երեք հազար լապաեր տուաւ: Առտուն բան մը պատրաստ չէր, քանի մը ժամուան մէջ ամէն ինչ աւարտեցաւ: Մըսթըլըներու պարտէզը սրահի մը վերածուած էր:

Գիշերը երկու շոգենաւ մէկը կղզիէն, միւսը կամուրջէն մեկնեցան, ասիական ու եւրոպական վասիօրի Հայերը Պէօյիք-տէրէ փոխադրելու: Բազմաթիւ էին անոնք ալ որ ցորեկէն արդէն դացեր էին: Երբ Շիրքէթի 18 թիւ շոգենաւը, որուն մէջ էի, Թարապիայէն բացուեցաւ Պէօյիք-տէրէ յառաջանալու, տեսարանը որ հեռուէն աչքերնուս առջեւ կը պարզուէր զիւթիչ, մոգեկան էր: Ամբողջ բլուր մը ստորտուն մինչեւ գաղաթը կարծես բոցերու մէջ: Ու երբ պարտէզէն ներս մտանք լուսաշող ճամբաներէ անցնելով կը բարձրանայինք բլուրը, որուն զագաթն էր ընդարձակ գաշտահարթի մը վրայ բնութեան ու արուեստին յօրինած պարասրահը: Պարերը անդիմակ էին, երեկոյթը ընտանեկան, մինչեւ իսկ պիւֆէն առանց զրամի: Առտուն զէմ գոհ եւ ուրախ սրտով մեկնեցանք:

Չմբան ու ամբան այս երկու պարահանդէսները ընկերութեան զուտ 1,800 ոսկիի արդիւնք մը տուած էին: Այս հանդէսին նկարագրութիւններն ալ շատ լաւ ազդեցին Կովկաս ուսկից անգագար զրամական աշակցութիւնը կը շարունակուէր Արարատեանի: Ընկերութեան գարոցներուն տարեկան ծախքին գումարը հիմա 1,500 ոսկիի բարձրացած էր: Ու երբ կը մտածէինք թէ երեք տարի առաջ, 1876 նոյեմբերին, վարանուծի մէջ էինք տարեկան 30 ոսկի ծախքի զու բանալու, կը կարծէինք թէ երեք տարուան մէջ բան մը կրցած էինք ընել: Բայց թէ՛ Արարատեանի և թէ՛ միւս ընկերութեանց ծախքերուն գումարը որքան ալ կարելու ըլլար, Հայաստանի պէտքերուն անբաւական պիտի համարուէր, եթէ նորատեսիլ շարժում մը երեսան եկած չըլլար Հայաստանի Հայոց՝ մասնաւորապէս զեղեցիներուն մէջ: Չանազան զեղերէ կրթական ընկե-

րութեանց տնօրէններուն զիմուսներ կ'ըլլային զպրօցի բացումի համար, ծախքը զեղացին հոգալու պայմանաւ, բայց տեսչութիւնը բոլորովին ընկերութեանց յանձնելով: Յատկապէս կը յիշեմ Պոլիս գտնուող տէրսիմցի Հայերուն ձեռնարկները: Սկսած էին ընկերութիւններ կազմել, եւ տարեկան 30-40 ոսկի հաւաքել իրենց երկիրը Արարատեանի միջոցաւ նախակրթարաններ բանալու համար: Այդ ձեռնարկները պիտի կրնային մեծ օգուտներ արտադրել: Ուսուցիչները պիտի ազատ մնային զեղացիներու ազդեցութեան ներքեւ ստորնանալու տխուր հարկէն, ու քաղաքի եւ գեղի վէճերուն պատրուակ պիտի չըլլային զպրօցիները: Նմանապէս վանքերը ձեռք առնելու խորհուրդներ յղացուեցան. Տէրօսիմի քանի մը վանքերուն տեղեկագիրները եկան, տեսնուեցաւ թէ այդ վանքերը լաւ մատակարարուելով հնարաւոր պիտի ըլլար զիշերթիկ վարձարաններ հաստատել հոն առանց շատ ծախսի: Բայց այդ բոլոր խորհուրդները, ձեռնարկները մնացին ապագային:

Արարատեան ընկերութիւնը 1879ին թէեւ բաւական կարեւոր գումար մը պատրաստած էր, եւ նուիրատուութիւններու զատակարգ մը ապահոված, ուստի եւ կարող էր տարեկան 1,500 ոսկիէն աւելի ծախսել, բայց խոհեմութիւն համարեց չափաւորել իր յառաջիմութիւնը: Հայաստանի մեծ սովը սկսած էր. ամբողջ Հայութիւնը հիմա իր հոգածութիւնը Հայաստանը նիւթապէս ապրեցնելու պէտք էր նուիրեր, հետեւաբար կրթական ձեռնարկները զանդաղ յառաջացնելու պարտականութիւն կար:

Սովին տխուր նկարագրութիւնները երեւցան Մշակի մէջ. եւ ահա յանկարծ սովեալներուն ի նպաստ գրամն ալ խառնուեցաւ Արարատեանի նուիրատուութիւններուն մէջ: Ու ետքէն Պոլիս «Հայաստանի Սովելոց կեդրոնական Յանձնաժողով մը» երբ կազմուեցաւ իսկ, դարձեալ Արարատեան ընկերութեան գործակցութիւնը խնդրուեցաւ: Վան խրկուած զրամներուն հեռագիրները Սերովբէ Կիւպէսկեան ստորագրելով հանդերձ, պատրիարքարանէն կը բերէին Արարատեանի սենեակը մեր ստորագրութիւնն ալ առնելու: Որքան որ ալ բարի կամեցողութիւն ունենայինք Հայաստանի սովատանջներուն օգտակար ըլլալու, բայց կը զգայինք թէ մեր կարողութենէն վեր էր այդքան բեռան տակ մտնել. հարկ եղաւ մասնաւորապէս Մշակէն խնդրել որ սովին եւ կրթութեան գործերը իրարու չխառնուին: Մենք ձեռքերնիս քաշեցինք: Բայց տեսանք նաեւ որ կը պահանջուէր Յանձնաժողովէն օրը օրին հրատարակել Հայաստան խրկած իր զրամները. այս պահանջումին ուժ տուող խմբագրական մըն ալ երեւցաւ Մշակին մէջ: Մեծամեծ անպատեհութիւններ կրնային առաջ գալ այսպիսի հրատարակութեան մը. ուստի Արժրունիին մասնաւոր նամակով մը պարզեցի թէ ի՞նչ է Հայաստանի կացութիւնը եւ թէ այդպիսի հրատարակութիւն մը աղիտաբեր կրնայ ըլլալ: Եւ շիտակը Արժրունի առանց վարանելու նոր խմբագրականով մը հերքեց առջի պահանջումը եւ յանձնարարեց ժողովրդին վստահութիւն ունենալ Յանձնաժողովին վրայ:

Կովկասի Հայերը որ Հայաստանի կրթական գործին սիրով ու եռանդով կը նպաստէին, Հայաստանի նիւթական կեանքին պահպանութեանն ալ փութացին աջակցել, առանց սակայն լքանելու Արարատեան ընկերութիւնը: Մշակ այս պարագային մէջ ալ մեծ ծառայութիւն մատուց: Միայն Արժրունին ինք 50,000 ռուպլի հաւաքեց Մշակով: Եղբայրաւորական այս բոլոր գործերը միանալով գաղաղափարային անդադրում փոխանակութեանց, փոխադարձ սիրոյ եւ համակրանքի հոսանք մը ստեղծեցին Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայոց միջեւ, որուն նմանը երբեք զեռ չէր տեսնուած: Ու այտ օրերու յիշատակը այնքան հզօրապէս ազդեց Թիւրքիոյ Հայոց մաքին վրայ, որ ետքէն ամենամեծ յոյսեր դրին Կովկասի վրայ, ու կարգ մը անձեր այդ անցեալն էր որ շահագործեցին: Թիւրքիոյ Հայերը մտացան սակայն յիշելու թէ անցեալին մէջ եթէ Կովկասեան Հայոց կողմէն մեզի տրուած աջակցութիւնը այնքան արդիւնաւոր եղած էր, պատճառը այն էր որ Կովկասցիները Թիւրքիոյ Հայոց իրենց իրենց գործերը վարելու ընդունակութեանը վրայ վստահութիւն ունեցան. իրենց մէջ ոչ ոք անձամբ միջամտեց: Արժրունին որ նախաձեռնարկն էր ու վարելը այդ շարժումին, երբեք իր կողմէն Հայաստան կամ Պոլիս ներկայացուցիչ մը չկարգեց: Եւ ո՞վ կը տարակուսի որ եթէ ետքէն Կովկասի Հայերը Վասպուրականի Հայոց վրայ վստահութեան ունենային ու վանի փրկութեան գործը վանցիներուն ձգէին, միայն եւ միմիայն նպաստելով անոնց, այսօր վանը շատ տարբեր վիճակի մէջ պիտի գտնուէր, ու բնականաբար ամբողջ Հայաստանն ալ:

Արարատեան ընկերութիւնը 1877ին հրատարակած էր իր առաջին տարուան տեղեկագիրը, որ 8-10 երեսով բարակ տետրակ մըն էր: 1879ին հրատարակեց երկրորդ շրջանի տեղեկագիրը, որ 80 երես էր բաղկանար. ատոր մէջ մեծկակ տեղ մը գրաւած էին Ռուսիոյ Հայերը. նուիրատուները իրենց անունովը եւ նուէրին քանակովը նշանակուած էին: Այս տեղեկագիրը 5,000 օրինակ տպուեցաւ, եւ ամէն կողմ տարածուեցաւ. 2,000 օրինակ Ռուսաստան խրկուեցաւ: Մամուլին մէջ յայտնուած կարծիքները, մեզի եկած նամակները կը հաստատակն թէ այդ տեղեկագիրն առաջ բերած տպաւորութիւնը սքանչելի եղած է:

Սակայն քիչ մնաց որ այդ տեղեկագիրը Պոլիս մեծամեծ գծուարութիւններ յարուցանէր ընկերութեան առջեւ: Խօսելով կրթական ծրագիրներուն վրայ, յայտնած էինք թէ հայ աշակերտը պէտք է ուսումնասիրէ Քրիստոս իբր «բարոյական մարդ», եւ բացատրած էինք մեր միտքը, այսինքն ինչ որ մարդկային առաքելութիւն է Քրիստոսի մէջ, Հայ տղուն պէտք է զայն սիրել սորվցնել: Եւ իրաւաւ, ի՞նչ օգուտ գերբնականէն խեղձ տղուն: Եւ ահա նախանձոտ չարամիտները այդ տողերէն սեղեցին օգտուիլ Արարատեան ընկերութիւնը ժողովրդին աչքէն ձգել տալու համար, իբր թէ այդ մէթոտով մենք անաստուածութիւն դասախօսել կուտանք եղեր քպրօցիները: Մեր թշնա-

մինքնը ձեռք առին Կրօնական ժողովը որպէս զի տեսակ մը բանադրանքի շրջաբերական հանեն Արարատեանի դէմ. շուկան որսմը ցանուեցաւ. խանութները, վաճառատունները ամէն կողմ խմբուեց մըն է սկսաւ լսուիլ: Գիտցողը չգիտցողը կը խօսէր: Արարատեանի անդամները տակնու վրայ եղած վազեցին գրասենեակը. ձիշո ամրան պարահանդէսը տալու ատեններն էին, եւ այդպիսի թշնամական ձեռնարկներ կրնային վնասել մեզի: Կիրակի օր մը դիմեցի ուղղակի Ներսէս Պատրիարքին, որ խնդիրը լսելէ յետոյ զիս ապահովեց թէ հոգ ընելու բան մը չկար. Կրօնական ժողովի յառաջիկայ նստին խնդիրը մեր ուզածին պէս կը կարգադրէր: Եւ իրաւ այ նոյն շաբթուն գործը վերջացաւ:

Այս միջադէպէն գատ, ուրիշ կարգ մը մանր մանր գէպքեր ալ ցոյց կուտային թէ կրթական ընկերութեանց դէմ դաւադրութիւններ կը պատրաստուին: Շատ մը ան խոստովանելի շահեր վնասուած էին այդ ընկերութեանց երեսն: Հայաստանի ժողովուրդը կամաց կամաց Պոլսոյ նոր երիտասարդութեան ազգացութիւնը կը կրէր. ու ժողովուրդը ապագայի մը մէջ Պոլսոյ եւ Հայաստանի երիտասարդները գաղափարի եւ զգացումի ամուր կապերով իրարու լծուած, պիտի յաջողէին իրենք տէր ըլլալ երկրին գործերուն: Նախ Արարատեանը կ'ուզէին հարուածել, իբր էն գորաւորը. զայն կործանելէն յետոյ կարգը պիտի գար միաններուն: Ասկէ գատ՝ ուրիշ կարգ մը նկատուեցին ալ կը թեւադրէին մեզի Հայաստանի կրթութեան գործը աւելի ամուր հիմերու վրայ զետեղել: Երեք ընկերութեանց միջեւ համաձայնութիւն մը ստեղծելով երեքը ի մի ձուլելու գաղափարը մենէ շատերուն մտքին մէջ ծնունդ առաւ: Ընդ այդ միջոցին երեք ընկերութիւններն ալ առանձինն առանձինն նամակներ ստացան Գրիգոր Արժրունիէն, որ կը ծանուցանէր թէ Կովկասի Հայերը շատ աւելի մեծ նպաստներ պիտի տային, եւ Մշակ շատ աւելի զօրեղ ուժ մը պիտի ըլլար Հայաստանի կրթութեան եթէ երեք կըրթական ընկերութիւնները միանային: Միեւնոյն ատեն միութեան գաղափարը Մշակի մէջ կը պաշտպանուէր: Ներսէս պատրիարքին եւ ուրիշներու Կովկասէն հասած նամակներ կը ծանուցանէին թէ 80,000 ռուպլի պատրաստ գումար մը կայ օր պիտի նուիրուի երեք ընկերութեանց, երբ ի մի ձուլուին: Աշնան կիրակի մը, 1879ին, Նորատունկեան խանը Գրիգորապետի գրասենեակը այս խնդիրներուն վրայ կը խորհէինք ամենքս մէկտեղ, երբ ներս մտաւ Գրիգորապետի անդամ երիտասարդ մը որ նոյն օրը իսկ թիֆլիսէն կուգար: Գրիգորապետը-Արեւելեան ընկերութեան կողմէ ներկայացուցիչ գացած էր Կովկաս: Կրակ ու բոց, տաղանդաւոր, զօրեղ գրող, համակրելի եւ պերճախօս, այդ երիտասարդը ամէնուն սէրն ու համակրանքը գրաւած էր Կովկաս, և Գրիգոր Արժրունիի մասնաւոր յարգանքը կը վայելէր: Թիֆլիս ինքն էր յղացած եւրեք ընկերութեանց միութեան գաղափարը, համաձայնած էր Արժրունիին հետ և կուգար իբր միութեան գաղափարին նուիրակը:

Երեք ընկերութեանց կողմէն երկուքական ներկայա-

ցուցիչ ժողով գումարելով երկարատեւ խորհրդակցութիւններ կատարեցինք միութեան եղանակին եւ պայմաններուն վրայ: Միացեալ ընկերութեան անունին խնդիրը կնճառտ հարց մըն էր: Մենք բնականաբար կ'ուզէինք Արարատեան անունին պահպանուիլ: Այդ անունը գաղափար մը կը պարունակէր, ու հաստատ զետեղուած էր մահաւանդ Կովկաս ամէն մտքի մէջ: Միւս երկու ընկերութիւնները կ'ընդգլխմանային, եւ իրաւունքով: Արարատ-Կիլիկեան անունը պիտի կրնար սրտերու և մտքերու վրայ խորապէս ազդել, բայց կարելի չէր Գրիգորապետը-Արեւելեանը զոհել: Խնդիրը կնճառտ էր, եւ լուծումը Միութեան առաջին Ընդհանուր ժողովին թողուցինք: Յետոյ պատրաստեցինք միացեալ-ընկերութեանց կանոնագիրը, որ երեք ընկերութեանց կողմէն առանձինն առանձինն ընդունուելէ յետոյ նոր ընկերութեան պարտաւորիչ օրէնքը պիտի ըլլար երեք տարուան համար: Երեք ընկերութեանց ընդհանուր ժողովները իրենց մէջէն պիտի ընտրէին որոշեալ թուով անդամներ, որոնք միանալով պիտի կազմէին ընկերութեան ընդհանուր ժողովը:

Նսխապատրաստական այս բոլոր գործողութիւնները կատարուելէ ետքը, երեք ընկերութեանց կողմէն ընտրուած անդամները 1880 յունիս 1ի կիրակին Ղալաթիա կեդրոնական վարժարանը դուժարուելով առաջին նիստը ըրին: Տքթ. Ռափայէեան ընդհանուր ժողովին առնուպետ եւ Պ. Անդրանիկ Այվազեան ատենապետը ընտրուելով ժողովը օրինաւոր կազմակերպութիւն ստացաւ: Պ. Թ. Ե. ի առաջարկութեամբ այդ ընդհանուր ժողովը ընկերութեան անունը դրաւ «Միացեալ-Ընկերութիւնք Հայոց Արարատեան, Գրիգորապետաց-Արեւելեան, եւ Կիլիկեան»:

Նախապէս պատրաստուած եւ ընդունուած կանոնագրին համաձայն ընկերութեան տնօրէն ժողովը պիտի ընտրուէր պետի դրութեամբ, այսինքն ընդհանուր ժողովը ատենապետ մը ընտրելով անոր պիտի թողուր իր ուժը պաշտօնակիցներուն ընտրութիւնը: Բայց առաջին շրջանի մը համար ընդհանուր ժողովը ուղղակի ինք պիտի ընտրէր ինք անդամէ բազկացած Գործադիր ժողովը, իւրաքանչիւր ընկերութեանց նախկին տնօրէն մարմիններէն երեքական անդամ նշանակելով: Այս ընտրութիւնն ալ նոյն օրը կատարուեցաւ: Ժողովը իր գործը վերջացուցած էր:

Միացեալ-Ընկերութեանց սնուուկին 4,000 ոսկի պատրաստ դրամ յանձնուեցաւ. 2,500 ոսկին Արարատեան ընկերութեանն էր, 1,500 ոսկին Գրիգորապետ-Արեւելեանին: Մասնաւորելով խօսքս Արարատեան ընկերութեան վրայ, աւելորդ չեմ համարիր յիշեցնել չորս տարուան աշխատութեան բարոյական և նիւթական հաշուեկշիռը զոր Միացեալ-Ընկերութեանց յանձնեց:

Երբ 1876 ապրիլ 15ին Արարատեան ընկերութիւնը հիմնեցինք, միայն 50 զուրուշ պղինձ դրամով գործի սկըսանք: Առաջին տարուան տեղեկագրին մէջ կ'ըսէինք. «Ընկերութիւն բարձր իր վարկը շատ կորսնցուցած է ազ-

զին քով, բայց առանց վարանելու կը կազմենք նոր ընկերութիւն մըն ալ:» Ժամանակակից Հայաստանը զեռ մեզի անձանօթ էր: Թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայոց միջև յարաբերութիւնները շատ սահմանափակ էին, եւ մենք մասնաւորապէս եւ ոչ իսկ Մշակ անունով թերթի մը գոյութիւնը գիտէինք: Չորս տարի ետքը՝ 2,500 ոսկի պատրաստ դրամ կար ձեռքերնիս, 200 ոսկիի շափ ասզին անդին պահանջ նուիրատուութիւններէ, սրոնք ամենքն ալ յետոյ գանձուեցան, և բոլոր գպրոցներուն մէկ տարեկան պիտոյքները ամբողջապէս հայթայթուած. Նիկողայոս Տէր-Ղեւնդեանցի Մայրենի-Լեզուի տպագրութիւնը տարեկան 400 ոսկիի զուտ հասոյթ մը կ'ապահովէր ընկերութեան. թէ՛ Թիւրքիոյ, թէ՛ Ռուսիոյ, թէ՛ Եւրոպայի Հայերէն տարեկան 2,500 ոսկի նուիրատուութիւն մը ապահովուած էր: Այդ ընկերութիւնը որ առաջին տարին 30 ոսկիի ծախս մը ընելու կը վարանէր, հիմակ տարեկան 1,500 ոսկիի ելմտացոյց մը ունէր՝ Վարժապետանոցի մը եւ երկու նահանգի՝ Վասպուրականի եւ Տաւրոսի մէջ քաղաքային ու գիւղային գպրոցներու համար, ուր 3,000էն աւելի տղաք կը կրթուէին: Օրուան Հայաստանին աղկ ծանօթացած էինք: Մենք կովկասին ծանօթացած էինք, կովկասը մեզի: Ռուսահայաստակ եւ թրքահայաստակ Հայոց միջև երբեք այդպիսի սերտ, մտերմական յարաբերութիւններ չէին հաստատուած. փոխադարձ վստահութիւնը կատարեալ էր եւ գործնականապէս կը յայտնուէր: Ու այս ամենքը կ'ընէին 21էն 25 տարեկան կրիտասարդներ, հազիւ չորս հինգ տարիէ ի վեր գպրոցը թողած. ու մեր մէջէն ո՛չ ոք վաճառականութեան, սեղանաւորութեան, հանրային գործերու մասնակցութեան, գրականութեան մէջ զիրք մը, անուն մը ունէր: Իայն երկու հոգի, մէկը իբր խմբագիր, միւրը իբր ուսուցիչ եւ զրոյ բաւական ծանօթ էին: Կովկասի Հայոց հետ ըրինք ինչ որ մենէ առաջ ոչ ոք ըրած էր, ու կը ցատիք որ ետքէն ալ ոչ ոք կրցաւ ընել: Ու այս յիշատակութիւնը կ'ընեմ քաջաբերու համար նոր երիտասարդները, որոնք պէտք է համազուն թէ առանց մեծ զոհողութեան իսկ, լոկ իրենց գրօսանքի յատկացած ծամանակէն պզտիկ բաժին մը հանելով ազգին, կրնան շատ օգտակար ըլլալ հանրութեան, բաւական է որ լրջօրէն, որտանց աշխատին, պինդ ու ամուր գրկելով գործը որուն կը ձեռնարկեն:

Միացեալ-Ընկերութեանց նորընտիր Գործադիր ժողովը քառասուն օր պաշտօնավարելէ յետոյ հրաժարական տուաւ, և պետի գրութիւնը անմիջապէս գործադրուեցաւ:

Մտադրէս գուրս է առ այժմ Միացեալ-Ընկերութեանց պատմութիւնը աւելի ընդարձակօրէն գրիչ. քանի մը կէտ միայն յիշեցնել կ'ուզեմ:

Ռուսութիւրք պատերազմէն ետքը մինչեւ չորս հինգ տարի Հայաստանի բարենորոգումներու հարցը Արեւելեան խնդրին օրուան ծրագրին մաս կը կազմէր: Այդ ծրագիրը երեք գլխաւոր կէտէ կը բաղկանար՝ Յունաստանի, Գարատաղի եւ Հայաստանի խնդիրները: Անգլիոյ ազա-

տական կուսակցութիւնը 1880ի երեսփոխանական ընտրութեան մէջ յաղթանակ տանելով, Կլատսթոն իշխանութեան զլուրը անցաւ: Անգլիոյ նախարարապետին Արեւելեան քաղաքականութեան յայտագիրը այդ երեք հարցերուն լուծումն էր: Բնականաբար Թիւրքիոյ Հայերը մեծամեծ յոյսերով պիտի ոգիւտրուէին՝ Միենոյն ատեն Ռուսիոյ կայսրը Ալեքսանտր Բ գրաւած էր Թիւրքիոյ բոլոր քրիստոնեաներուն սիրտը որոնք իրենց փրկութիւնը «ազատարար ձարէն» կ'ափնկալէին: Կլատսթոն Ալեքսանտրը Բ ի զօրաւոր աջակիցն էր եղած Պուլկարիոյ ազատութեանը համար, մինչ տակաւին Անգլիոյ ընդգիծագիր կուսակցութեան պետն էր միայն. իսկ հիմա իր երկրին քաղաքական գերագոյն վարիչը ըլլալով ներքին էր Հայոց յուսալիր մեալ Հայաստանի բարեկարգութեան համար Անգլիոյ եւ Ռուսիոյ վրայ. երկու մեծ և ազնուամիտ մշտեք կը կառավարէին երկու աշխարհները: Մեր ժամանակակից պատմութեան այս էջին վրայ ուրիշ առթիւ խօսուած ըլլալով հարկ չեմ տեսներ մանրամասնութիւնները կրկնել, միայն կը յիշեցնեմ: Նոյն ատենները, 1880ին, վեց մեծ պետութիւնները Հայաստանի բարեկարգութեանց համար ծրագիր մը կը ներկայացնէին Դրան, պահանջելով անմիջական գործադրութիւնը: Հայկական խնդրին էն նպաստաւոր թուականն էր:

Այդ միջոցին թէ՛ Հայաստան և թէ՛ Կովկաս յատուկ շրջաններու մէջ խորհուրդներ կը յղացուէին զիւրացնելու համար Հայաստանի վիճակին բարւոքումը մասնաւորապէս Ռուսիոյ օգնութեամբ: Պոլսոյ հետ ալ յարաբերութիւններ հաստատել հարկ էր: Պ. Փորթուպեան 1880ի ձմեռը, զեկտեմբերի մէջ, յանկարծ վանէն Պոլիս եկաւ: Կրթական ո՛ր եւ է գործ չունէր, ու Միացեալ-Ընկերութեանց անօրէն խորհրդին հետ բանակցութիւն չկատարեց: Իր Պոլիս վերադարձին նպատակը գաղտնի կը մնար: Միենայն ատեն Եւրոպայէն Պոլիս վերադարձաւ Պ. Մ. Չեբրազ, որ Եւրոպա ըրած ուղեւորութեան մը առթիւ Կլատսթոնի հետ երկարօրէն տեսակցած էր հայկական խնդրին վրայ, եւ մանրամասն տեղեկութիւններ կը բերէր Ներսէս պատրիարքին: Մշակի 1881ի թիւերուն մէջ բաւական ընդարձակօրէն պատմած եմ այդ տեսակցութիւնը: Չուգաղխութեամբ մը Պոլիս եկաւ նաեւ 1881 յունուար 1ին կովկասեան սպայ Պ. Գր. Նիկողոսեան որ հանրաժանօթ եղած էր ռուսութիւրք պատերազմին ատենը Էրզրումէն Մշակի խրկած թղթակցութիւններովը: Ետտ սերտ յարաբերութեան մէջ էր Մշակի հետ: Հայաստանի, կովկասի, Եւրոպայի մէջ հայկական խնդրին զանազան հանգամանքներուն վրայ այս երեք անձները ճշգրիտ գաղափարներ կրնային ունենալ. ասանց խորհրդակցութիւնէն հնարաւոր էր օգտուիլ: Երեքը միասին անմիջապէս զիշեր մը մեզի եկան եւ շատ շահեկան տեսակցութիւն մը ունեցանք, ի ներկայութեան ուրիշ քանի մը բարեկամներու:

Հետզհետէ փոխանակուած կարծիքներէն հետեւցուցինք որ եթէ Պ. Չեբրազ Միացեալ-Ընկերութեանց ատենապետութեանը կոչուի, ընկերութիւնը կարող կ'ըլլար

Հայաստանի կնճռոտութեան մը պահուն կարեւոր գիրք մը գրուել: Պ. Չերազ ինքն ալ ընտրելի ներկայացած էր արդէն: Ես կը յուսայի թէ այդ անունը կրնար լաւ ազդեցութիւն մը ունենալ կովկասի Հնչոց վրայ: Եւ այս նպատակաւ ալ պիտի գրէի Մշակին, ու այդ ընտրութեան քաղաքական նշանակութիւն մը պիտի տայի, ինչպէս սր իւրօրը Կարէր — Կ.Ն. Իմ մտածութեամբս: Քիչ ատենէն Պ. Չերազ Միացեալ-ընկերութեանց անօրէն ժողովին ատեն նապեմ ընտրուեցաւ:

ԱՐՓԻՍՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Կ. Պոլսէն օգոստոս 21 Թուականով կը գրեն Սրահ տարտի:

Պաղտատի երկաթուղիին շինութեան արտօնութեանը համար երկու հակառակորդներուն՝ Գերմանիոյ և Անգլիոյ՝ մրցութիւնը երթալով կը սաստիանայ, ու կը դառնանայ: Գերմանացիները իրենց խնդրանքը պաշտօնապէս Հանրապետ շինութեանց նախարարութեան ներկայացուցած չեն, այլ յիշատակագրի մը ձեւով սուլթանին մատուցած: Համարելու տարօրինակ ձիգ մը կայ այդ պաշտօնագրին մէջ: Կը սկսի հայրական հոգածութեան եւ պաշտպանութեան ձեւ մը աննելով փոքր-Ասիոյ միւս երկաթուղիներուն նըկատմամբ, մինչդեռ յայտնի է որ Գերմանացիները յամառաբար ամէն ջանք ի գործ գրին այդ երկաթուղիները խզելու: Թէպէտ Իզմիր-Այստընի երկաթուղիին անգլիական ընկերութիւնը բացարձակապէս մերժեց Գերմանացիներուն առաջարկները՝ իրենց հետ միանալու, եւ վերջերս վերակազմութեան նոր ծրագիրը քուէարկեց, եւ սակայն յիշատակագիրը կեղծաւորաբար կը հաւատտէ սուլթանին թէ նորին վեհափառութեան խաթերը համար պիտի շարունակէ իր ջանքերը Այստընի ընկերութեան մօտ, և տակաւին յոյս ունի յաջողութեան:

Մասնանիչ ընելէ յետոյ թէ օսմանեան գանձը անցեալ տարի 126,000 սօկի միայն վճարեց Անատոլիոյ գծին երաշխաւորութեանը համար, եւ յոյս յոյսներով թէ յառաջիկայ տարի եւ յաջորդ տարիները ալ աւելի փոքր գումարներու պէտք պիտի ըլլայ, մինչեւ որ դիժը կարենայ իր ծախքերը հանել, յիշատակագիրը կը ինզրէ որ օսմ. կառավարութիւնը վեց տարի շարունակէ իր յանձն առած երաշխաւորութեան գումարը վճարել Օսմանեան Պանքային միջոցաւ, 300,000 սօկիէն աւելի: Ուրիշ խօսքով, Գերմանացիները կը խնդրեն որ Թիւրքիոյ գանձարանը 2 միլիոն սօկիէն աւելի նուէր մը ընէ իրենց, որ կ'ըսեն — առանց սակայն ապահովութիւն տալու թէ իրենց խոստումը պիտի պահեն — մինչեւ Պաղտատ շին-

ուելիք երկաթուղիին տոկոսը վճարելու պիտի ծառայէ:

Սկիզբէն մինչեւ վերջը, այս յիշատակագիրը ստապատիր հաւատարմութեամբ հիւսուածք մըն է, սուլթանին անձին ուղղուած ստրկական շողորթութիւններով եւ իրենց հակառակորդներուն դէմ սաղաթնքներով լեցուն: Յիշատակագիրը գլխաւորապէս ուղղուած է Բէնիցըր խումբին դէմ, որուն ծրագիրը նախարարութեան հաւանութիւնը կը վայելէ: Այս խումբը, որ կ'ուզէ Պաղտատի երկաթուղին շինել, փոխանակ խնդրելու որ իրեն գրամ վճարուի, կ'առաջարկէ ինք մեծ գումար մը աւանդ ձգել, եւ ամէն քննութեան ու հսկողութեան յօժար կը հռչակէ ինքզինքը:

Ամբողջ խնդիրը առնտրականէն քաղաքական ըլլալու վրայ է: Անատոլիոյ երկաթուղիին անցեալ պատմութիւնը շատ նպաստաւոր գաղափար մը տուած չէ Թիւրք կառավարութեան՝ Գերմանացիներուն գործելու եղանակին մասին: Ընկերութեան յաճախորդները, թէ՛ տեղացի և թէ՛ օտար, արտնշալու անդադրում պատճառներ ունեցած են, եւ երաշխաւորութեան մասին իր ընչաքաղցութիւնը ու յեանորդները պահանջելու եղանակը շուտով մոռցուելիք բաներ չեն: Միւս կողմէ, Թիւրքիա կը սկսի կոր ըմբոնել թէ՛ եթէ Անգլիոյ բարեկամութիւնը վայելի կ'ուզէ — ու ժօտիկ ապագայի մը մէջ ատոր պէտք պիտի ունենայ թերութեամբ, զայն ձեռք բերելու ամէնէն կարող ճամբան է իր ազէկ բաներէն մէկ քանին Անգլիացիներուն տալ: Թէ՛ Գերմանիա եւ թէ՛ Իտալիա վերջին երեք տարիներս գրապէս ամէն առաւելութիւն վայելցցին ի հեճուկս Անգլիոյ՝ թէ՛ երկաթուղիներու եւ թէ՛ նաւաշինութեան քործերու մէջ, որոնք մեր մասնագիտութիւնը կրնան նկատուիլ: Վերջերս միայն, քիչ շատ տրամազրութիւն տեսնուեցաւ թող աղու որ անգլիական վաճառականութիւնը անարգել առաջ երթայ, եւ ամէն պատճառ կայ կարծելու թէ Լոնտոնի օսմանեան դեպանը, որ հոս գալէն ի վեր մէկ քանի տեսակցութիւն ունեցաւ սուլթանին հետ, իր ամբողջ ազդեցութիւնը Անգլիոյ նժարին կողմը դրած է:

Տարակոյս չկայ թէ Ֆաշտտայի միջազէպը խոր սպաւորութիւն թողած է սուլթանին մտքին վրայ, եւ թէ Անգլիոյ բարեկամութեան արժէքը շատ բարձրացած է Երլտըզի մէջ: Ռուսական մամուլին լեզուն ալ վերջերս շատ վախ ներշնչած է Թիւրքիոյ, եւ մէկ քանի օսմանեան դեսպաններու միեւնոյն ատեն Կ. Պոլիս գտնուելը նշան մը կը համարուի թէ Թիւրքիա կ'աշխատի կոր այնպիսի կարգազրութիւն մը ընել որ կարենայ ինքզինքը ապահովել ո եւ է պատահականութեան դէմ: Այսպիսի կարգազրութեան մը մէջ, Անգլիա բնականաբար պարտի առաջին տեղը գրաւել, եւ երբոր Գոսթաքի փաշա Լոնտոն դառնայ, հաւանական է որ հետը տանի նոր եւ գաղանի հրահանգներ, որոնք միանգամայն Բարիզի եւ Պերլինի օսմանեան դեսպաններուն ալ պիտի տրուին:»

* * *

Սրանտարտի թղթակիցը օգոստոս 28ին այն նիւթին վերադառնալով կը գրէ.

«Հեղինական պատերազմին վերջանալէն ի վեր, Թիւրքիա միշտ իրեն դէմ խոչընդոտ գտած է Գերմանիան ու Ռուսիան, ու այժմ կը սկսի չորս զին նայել եւ միջոց մը փնտռել ազատելու համար մէկուն ծանրաբեռն բարեկամութենէն եւ միւսին ընդհատ հովանաւորութենէն ու խոչաւնդումէն: Գերմանիոյ մասին խօսելով, ա՛յլ վերջը չկայ գերման հպատակներուն ըրած անգոյլ տարապայման խնդրանքներուն. այնպէս կը նկատեն թէ Գերմանիոյ կայսեր այցելութիւնը, որ սակայն Թիւրքիոյ համար ո եւ օգուտ մը չունեցաւ, կը բաւ որպէս զի ամէն միջոց տըրուի միմիայն իրենց՝ օսմանեան կայսրութիւնը առեւտրապէս եւ տնտեսապէս շահագործելու:

Սուլթանը, որ զիրաւ չի խաբուիր, կը սկսի կո՛ր ձանձրանալ այս միակողմանի բարեկամութենէն: Միւս կողմէ, Թիւրք նախարարները գրեթէ վերջնապէս մերժած են Անատոլի երկաթուղիին գերման ընկերութեան տարապայման եւ եսամոլ խնդրանքը Պաղտատի գծին շինութեանը համար:

Կ. Պոլիս հաւաքուած օսմանեան զեպանները կը շարունակեն ժողովներ գումարել եւ սուլթանէն ունկնդրութեան ընդունուիլ, եւ զրոյց կը պտրտի թէ մօտերս իրենց զանազան պաշտօնատեղիները պիտի դառնան համանման հրահանգներով որոնք այժմ կը պատրաստուին եւ որոնց պիտուին է Թիւրքիան ազատել արդի կացութենէն որով հեղհեղաւ ալ աւելի կախում կ'ունենայ կոր Գերմանիայէն ու Ռուսիայէն, եւ բանաւոր համաձայնութեան մը գալ ուրիշ պետութեանց, մասնաւորապէս Անգլիոյ հետ:»

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ. Կ. Պոլսէն կը գրեն մեզ օգոստոս 26 րոշակաւով.

«Այս օրերս բազմաթիւ Հայեր ձերբակալուեցան Կեռիկ-փաշայի եւ Գոռն-Գարոնի կողմերը, մեկ քանի Հայեր ալ Բերայի կողմը: Այս ձերբակալութեանց պատճառը սուրբակի զահակալութեան տարեդարձին մօտեւնալն է, վախենալով որ Հայերը խռովութիւն մը կը յարուցանեն այդ օրը: Այս երեւակայական վախը պատճառ եղած է ամենախիստ միջոցներ ձեռք առնելու Հայերուն դէմ:»

Նոյն նիւթին վրայ «Սրանտարտ»ի քղրակիցը կը հեռագրէ.

«Ըստ սովորականին, սուրբակի զահակալութեան յասալիկայ տարեդարձին ասքիւ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան, գլխաւորաբար Հայերէն, եւ ամէն կողմ գրոյց կը պտրտի թէ հաշտական է որ խռովութիւններ և ջարդեր պատահին: Թիպիտ այս ձերբակալութիւնները ցաւալի իրողութիւն մըն են, սակայն թերեւ

ասիկա ամէնէն ապահով միջոցն է զերծ մնալու քաղաքական գրգռիչ տարրերէ. միայն թէ, շահագոյն պիտի ըլլար, փոխանակ ամենէն Հայերը ձերբակալելու, ձեռք դրնել այն ակոյսայ խաւմներուն վրայ որոնք կը շարունակեն մեծ քաղով հոս գալ գաւառներէն:»

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ. Կ. Պոլսէն օգոստոս 28 րոշակաւով կը հեռագրեն «Սրանտարտ»ի.

«Ռուսական դեսպանատունը նորին սկսած է ձեռնարկներ Դրան վրայ՝ Կովկասի հայ գաղթականներուն դարձին համար, պահանջելով որ ընդփոյժ հարկ եղած միջոցները տնօրինուին՝ ընդունելու համար ամենազակ 10,000 հոգի: Ինչպէս յաճախ դիտել տուած եմ, շատ տարակուսական է թէ այդ թիւին կէտը իրօք գաղթականներ են, եւ Ռուսիոյ բաղձանքն է մէկ կողմէն ազատիլ իր հողին վրայ գտնուող բոլոր Հայերէն, եւ միւս կողմէն կողմ դնել Թիւրքիան:

ԹԻԻԻԲԻՈՅ ԳԱՆՁԸ ամէն ժամանակի առջի կողմն է: Կառավարութիւնը մտադիր էր Մաքսատան հասոյթովը երաշխաւորուած փոխաւորութեան սովոր զեղչելով, կարեւոր գումար մը ձեռք աւելնել, բայց այս գործողութիւնը չուրք ինկած է՝ Օսմ. Պանքայի ստաւարկած պայմաններուն պատճառաւ: Դռնը կը կիտակ թէ Պանքան, գիտնալով կառավարութեան շահագոյն պետքը դրամի համար, ծայրայեղ պայմաններ ստաւարկած է, որոնք ընդունելի չեն: Հետեւաբար, հրատան դրկուեցաւ նախագահներու կոռուակալներուն որ ամէն միջոց ի գործ դնեն դրամ ձարելու համար, որպէս զի կառավարութիւնը կարենայ օգոստոսի ծախքերը վճարել: Եւ զի գիշացիներ:

ԵԼՄԻՆԻԷն ամենաւերջին յարերը կը ծանուցանեն թէ կացութիւնը միշտ տագնապալի է այնտեղ, եւ սպրտաւորական շարժումը կը տարածուի:

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԲԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին զրկել առ

L. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND)

LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԲԻԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեզինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 սոլար: